

ԵՐԵՎԱՆԻ ԿՈՄԻՏԱՍԻ ԱՆՎԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻԱ

ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ
ԺՈՂՈՎԱԾՈՒ

ՊՐԱԿ 3

ԵՐԵՎԱՆԻ ԿՈՍԻՏԱՍԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻԱ

ЕРЕВАНСКАЯ ГОСУДАРСТВЕННАЯ КОНСЕРВАТОРИЯ
ИМ. КОМИТАСА

ՈՒՍՈՒՄՆԱՍԵԹՈՂԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ
ԺՈՂՈՎԱԾՈՒ
ՊՐԱԿ 3

СБОРНИК
УЧЕБНО-МЕТОДИЧЕСКИХ РАБОТ
ВЫПУСК 3

ԵՐԵՎԱՆ 2006 ԵՐԵՎԱՆ

ՀՏԴ 78
ԳՄԴ 85.3
ՈՒ - 794

ԵՐԵՎԱՆԻ ԿՈՄԻՏԱՍԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻԱ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Երևանի Կոմիտասի անվան պետական
կոնսերվատորիայի գիտական խորհրդում

Խմբագրական խորհուրդ
նախագահ՝ Ս.Գ.Սարաջյան, Հ.Հ.Սմբատյան, Է.Զ.Թադևոսյան,
Գ.Գ.Ղազարյան, Ի.Մ.Յավրյան, Ի.Գ.Տիգրանովա, Ս.Վ.Կոլոսարյան

Գրախոսներ՝ պրոֆեսորներ՝ Ա.Շ.Գուրգենով, Է.Ս.Գասպարյան,
Ս.Ա.Գյուլբուդադյան, Հ.Ս.Հովհաննիսյան, Ս.Վ.Կոլոսարյան, Ա.Գ.Գրիգոր-
յան, Ա.Ս.Բերբերյան, Կ.Խ.Թովչյան արվեստագիտության թեկնածուներ,
մանկավարժական գիտությունների դոկտոր Յ.Վ.Յուզբաշյան, պրոֆեսոր-
ներ Ի.Լ.Զոլոտովա, Ս.Բ.Ամատունի, դոցենտ Վ.Խ.Թովմասյան:

Հիմնադիրներ՝ ռեկտոր, պրոֆեսոր Ս.Գ.Սարաջյան,
«ԵՊԿ հրատարակչություն» տնօրեն, երաժշտագետ Գ.Կ.Շազոյան
Կազմեցին և խմբագրեցին՝ Գ.Ս.Սարաջյան, Գ.Կ.Շազոյան
Մասնագիտական խմբագիր՝ Գ.Ս.Սարաջյան
Խմբագիրներ՝ Ս.Մ.Ազնաուրյան, Հ.Ն.Մուրադյան, Վ.Խ.Թովմասյան
Գեղարվեստական խմբագիր, համակարգչային շարվածք և
սրբագրում՝ Ս.Ս.Ղուկասյան

ՈՒ-794 ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ,
ՊՐԱԿ 3. - Եր.: «ԵՊԿ հրատարակչություն», 2006.- 176 էջ:

Ուսումնամեթոդական աշխատանքների ժողովածուն նախատեսված է
երաժշտական բուհերի դասախոսների համար: Այն նպատակ ունի ծանո-
թացնելու ուսումնական գործընթացի անհրաժեշտ մեթոդաբանությանը:

ԳՄԴ 85.3

ISBN 978-99941-998-3-9

© «ԵՊԿ հրատարակչություն», 2006

© "Издательство ЕПК", 2006

© "YSC Publishing House", 2006

Գրիգորյան Լիիթ Երվանդի

դաշնակահար, արվեստագիտության թեկնածու, Կոմիտասի անվան ԵՊԿ կատարողական արվեստի պատմության և մանկավարժական պրակտիկայի ամբիոնի պրոֆեսոր

ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԸՆԿԱԼՍԱՆ ՈՐՈՇ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Գեղարվեստական ստեղծագործությունը գործունեության մի հատուկ տեսակ է, որը պահպանում է մարդու գործունեության ընդհանուր գծերն ու կառուցվածքը, սակայն միաժամանակ իր ուրույն նշանակությունն ունի մարդու կյանքում: Արվեստի ստեղծագործության և իր հասցեստիքոջ («ռեցիպիենտի» տերմինը ըստ Ա.Ն.Սոխորի) փոխներգործության խնդիրն արվեստի ներքին զարգացման օրինաչափությունների, դրա բնույթի, էության, ինչպես նաև դրա հասարակական նշանակության ուսումնասիրության կարևոր ոլորտներից է: Այն տարածված կարծիքը, իբր արվեստի ստեղծագործությունը գոյություն ունի միայն ընկալման մեջ, որ ունկնդրի, ընթերցողի կամ հանդիսատեսի հետ փոխներգործությունից զատ այն լոկ չիրականացած հնարավորություն է և հանդես է գալիս որպես ինքնուրույն արժեք ունեցող «իբր ինքն իր մեջ» (անկախ նրանից, թե արդյոք ռեցիպիենտն ընդունակ է գիտակցել այդ արժեքը, թե ոչ), բոլորովին էլ չի փոխում ընդհանուր պատկերը: Կենտրոնում, միևնույն է, մնում է ստեղծագործությունը՝ որպես «լռակյաց աֆինքս», իսկ դրա շուրջը պտտվում են այդ ստեղծագործությունը «խոսեցնելու» խնդրով մտահոգված մարդիկ: Ումանց դա հաջողվում է, այնինչ շատերը հեռու են մնում գեղագիտական վայելքի և կյանքի իմաստության կենսատու աղբյուրից: Երբ մարդը հաղորդակցվում է արվեստին, միևնույն ստեղծագործության ընկալման տարբերությունները հաճախ կապված են ոչ միայն ստեղծագործության բովանդակության մեջ ներթափանցման ունակությունների տարբերության, այլ նաև տվյալ ստեղծագործության նկատմամբ տարբեր մարդկանց ունեցած պահանջների հետ: Ելնելով տվյալ ստեղծագործությունից, ինչպես նաև այն իրավիճակից, որտեղ տեղի է ունենում դրա հետ առաջին շփումը՝ ռեցիպիենտի կողմնորոշումներն ու սպասելիքները կարող են փոփոխվել որոշակի, երբեմն բավական լայն շրջանակներում: Ըստ երևույթին, արվեստի հետ շփման մեծ ճկունությունը հատուկ է առավել զարգացած ունկնդիրներին, ընթերցողներին ու հանդիսատեսներին: Նրանք ընդունակ են հատուկ չափանիշներով վերաբերվելու յուրա-

քանչյուր ստեղծագործությանը: «Առարկան դիտարկվում է որպես արվեստի ստեղծագործություն, քանի որ այն ընկալվում է որպես այդպիսին հանդիսատեսների, դրանց այս կամ այն մասի, և վերջապես առանձին մարդու կողմից» (1. էջ 32). Ճշտենք, որ մեր կարծիքով, որևիցե մի առարկա արվեստի ստեղծագործություն համարելը, ըստ Դ.Ա.Լեոնտևի, «դեռ չի նշանակում, որ դրա ընկալման գործընթացները պարտադիր պետք է կազմակերպվեն գեղարվեստական ընկալման օրենքներով» (2. էջ 111):

Կարևորը արվեստի ստեղծագործության՝ որպես գործունեության ընկալման ըմբռնումն է: Ավելի քան 40 տարի առաջ Վ.Ֆ.Ասմուսի տված գեղարվեստական ընկալման գործուն քննության մեկնությունը սահմանված է ամենից հստակ. «Գեղարվեստական բովանդակությունը... ստեղծագործությունից անմիջապես չի թափանցում ընթերցողի ուղեղում: Ընթերցողը վերադառնում է այն ըստ ստեղծագործության մեջ առկա կողմնորոշիչների, սակայն վերջնական արդյունքը պայմանավորված է ընթերցողի մտավոր ունակություններով, հոգևոր գործունեությամբ: Այդ գործունեությունը ստեղծագործական աշխատանք է: Ոչ մի ստեղծագործություն չի կարող հասկանալի լինել, եթե ընթերցողն իր գիտակցության մեջ ինքնուրույն և հոժարակամորեն չանցնի ստեղծագործության հեղինակի նշած ճանապարհով» (3. էջ 42): Իրոք, ստեղծագործության հետ շփման ցանկացած ձևը որոշակի գործունեություն է, անկախ նրանից, թե մենք կհամարենք այն գեղարվեստական կամ գեղագիտական տեսակի գործունեություն: Հենց այդ գործունեության տեսակից կլինի արդյունքը՝ անհատի վրա ստեղծագործության ներգործության առկայությունը, ուղղվածությունը, որակն ու խորությունը:

Գոյություն ունի գեղարվեստական ընկալման ներքին մեխանիզմի վերաբերյալ հարցին պատասխանելու մի քանի փորձ: Օրինակ, Ա.Ն.Սոխոբն առանձնացնում է մի շարք աստիճաններ: Նախնական աստիճանը ունկնդրվող ստեղծագործության նկատմամբ հետաքրքրության առաջացումն է: Հիմնական աստիճաններն են. 1) ունկնդրումը որպես ֆիզիկական և ֆիզիոլոգիական գործընթաց, 2) երաժշտության ըմբռնումն ու վերապրումը, 3) դրա մեկնաբանումն ու գնահատումը (4. էջ 145): Բացի այդ, առանձնացվում է ստեղծագործության հետնեղագործության աստիճանը, որը կայանում է կատարումից հետո դրա իմաստավորման և վերաիմաստավորման, հետագայում ունկնդիրների վրա թողած ազդեցության մեջ: Սոխոբը շեշտում է երաժշտական ընկալման գործընթացն աստիճանների տրոհման պայմանականությունը: Իրականում, «պարտադիր չէ, որ նշված աստիճանները հաջորդեն իրար. դրանք շատ հաճախ հանդես են գալիս միա-

ժամանակ: Դրանք տրամաբանական, և ոչ թե ժամանակագրական փուլեր են: Մենք միաժամանակ ունկնդրում ենք ստեղծագործությունը և իմաստավորում, մեկնաբանում ու գնահատում այն» (5. էջ 16): Սրան կարելի է գումարել նաև ստացված տվյալների ներգրավումը ամծի գեղարվեստական և հասարակական անհատական փորձի մեջ, ինչպես նաև ամբողջական գեղարվեստական պատկերացումը կերտող դիտարկումների և ապրումների համադրությունը: Այդ փուլում տեղի է ունենում լսածի, տեսածի, ապրածի իմաստավորում:

Տարբեր ստեղծագործություններ տարբեր ընկալում են պահանջում նույնիսկ միևնույն ռեցիպիենտից: Այսպես, Է.Վ.Ալեքսեևը համահեղինակների հետ հանգում է «լուրջ և թեթև երաժշտության ընկալման տարբեր մեխանիզմների» (6. էջ 229) մասին եզրակացության: Արվեստի նույնիսկ միևնույն տեսակի և ժանրի շրջանակներում տարբեր ստեղծագործություններ ընկալվում են տարբեր կերպ: Իսկական, բարձրարժեք ստեղծագործության մեջ գեղարվեստական ձևը համապատասխանում («կորելատիվ») է բովանդակությանը: «Կորելատիվության» այն աստիճանից, թե որքանով է ձևը համապատասխանում բովանդակությանը, պայմանավորված է գեղարվեստական ձևի հիմնական ֆունկցիայի՝ տվյալ իմաստային բովանդակության ընկալմանը ռեցիպիենտի հոգեբանական կողմնորոշման ֆունկցիայի իրագործման ազդեցությունը: Ստեղծագործության իմաստի մեջ ներթափանցելու համար անհրաժեշտ է ըմբռնել նրա ձևի լեզուն, քանի որ «գեղարվեստական ստեղծագործությունը հոգեբանական ազդեցություն է գործում միմիայն իր ձևով» (7. էջ 54):

Ձևից և բովանդակությունից բացի, գոյություն ունի ստեղծագործությանը վերաբերող ևս մի գործոն՝ նրա «գովազդային թաղանթը», այսինքն, ստեղծագործության վերաբերյալ տեղեկությունների այն ամբողջությունը, որը ռեցիպիենտը կարող է ունենալ ստեղծագործությանն առնչվելուց առաջ, և որի հիման վրա կարող է որևէ գիտակցված կամ չգիտակցված պատկերացում կազմել նրա մասին: Այդ «թաղանթին» է պատկանում, օրինակ, ստեղծագործության անվանումը, հեղինակի ազգանունը: Արվեստի ստեղծագործության ընկալման գործոններից է նաև տվյալ պահին ռեցիպիենտի կենսական իրավիճակը. նա կարող է հոգնած կամ դառնացած լինել, կամ էլ ընդհակառակը՝ ունենալ բարձր տրամադրություն: Հասկանալի է, որ այդ ամենն անդրադառնում է արվեստի հետ նրա փոխազդեցության առանձնահատկությունների վրա: Մարդու «արժեքաիմաստային» կազմակերպվածության հետ կապված արվեստին առաջադրվող պահանջներն արտացոլում են անձը, անհատական նախընտրությունները, որոնք կապված են մարդու արժեքների համակարգի, կեն-

սափորձի և արվեստի հետ շփման նրա փորձի հետ:

Ստեղծագործության հետ նախնական շփման աստիճանին ռեցիպիենտը կրում է ստեղծագործության զգացմունքային-պատկերավոր գեղագիտական ազդեցությունը. հնչող թեման, մեղեդին, մարդու մարմնի ուրվագիծը, մատույրմորտի հրաշակերտ գունային պատկերը կարող են «նախնական զգացմունք» առաջացնել՝ մի գնահատական, որը մենք հետագա ընկալման գործընթացում ցանկանում ենք ճշտել, հաստատել, լրացնել և այլն, երբեմն էլ՝ հերքել: «Նախնական զգացողությունը» չի սահմանափակվում նախնական աստիճանով. այն կարող է ինչ-որ չափով փոփոխվելով պահպանվել ստեղծագործության հետ շփման ամբողջ ընթացքում, քանի դեռ պահպանվում է ստեղծագործության զգացմունքային-պատկերավոր ազդեցությունը: «Նախնական զգացողությունը» ռեցիպիենտի համար մի ուրույն հիմք է՝ ստեղծագործության խորքերը հետազայում թափանցելու համար: Հաջորդ գործընթացը ստեղծագործության բովանդակության վերամշակումն է: Արվեստի ստեղծագործություն հասկանալը նշանակում է «ըմբռնել դրա բովանդակությունը, այսինքն, մեր գիտակցությանն ամմիջականորեն տրված նյութական ձևից զատել վերջինիս իդեալական նշանակությունը» (8. էջ 46):

Արվեստի և անձի փոխներգործության էությունը հասկանալու համար կարևոր է գեղարվեստորեն վերապրել գործընթացը: Եթե ստեղծագործության խորքերը թափանցելու գործընթացն արտահայտում է անձի ստեղծագործության ներգործությունը, իսկ բովանդակության վերամշակման գործընթացն՝ ընդհակառակը, ստեղծագործության նկատմամբ անհատի վերաբերմունքը, ապա դրանց փոխներգործությունը եզրափակող վերապրումի մեջ, հիրավի, իրականանում է երկու աշխարհների՝ անձի ներաշխարհի և ստեղծագործության ներաշխարհի փոխներգործություն: Երբ արվեստի ստեղծագործությունը «հասկանալի» է մարդուն և սկսում «խոսել» նրա հետ, կարելի է արձանագրել մարդու վրա արվեստի ազդեցությունը:

Եվ վերջապես՝ ստեղծագործության գնահատականը: Այն արվեստի իմաստային բովանդակության ընկալման, ըմբռնման և յուրացման արդյունք է: Այն հնարավորություն է ընձեռում ի հայտ բերելու, մի կողմից, մարդու վրա արվեստի ներգործությունը, իսկ մյուս կողմից՝ մարդու գիտակցության բուն մակարդակը, նրա կողմնորոշումը արվեստում: Դրանից բացի, ստեղծագործության գնահատականի վրա հաճախ մեծ ներգործություն ունեն ուրիշի կարծիքը, մակերեսայնորեն յուրացված ստերեոտիպերը, ինչպես նաև մորաձևությունը, շահախնդրական նկատառումները և այլն: Այդ իսկ պատճառով, թեպետ մարդու և ստեղծագործության փոխազդեցության գործընթացի

բնույթի մասին կարելի է դատել ստեղծագործությանը տրված նրա գնահատականից, երբեմն բավական խրթին է լինում որոշել, թե ինչով է պայմանավորված այս կամ այն գնահատականը:

Գեղագիտական գործունեությունը կերտում է արվեստի մի ստեղծագործություն, բյուրեղանում դրա մեջ: Իհարկե, այդ արգասիքը գոյություն ունի որևիցե մի նյութական ձևով՝ մարմար կամ բրոնզ, գույներ, երաժշտական հնչյուններ և այլն: Գեղագիտական գործունեության արգասիքները ուղղված են մարդուն, ստեղծված մարդկանց ներագրելու: Ստեղծագործական գործունեության բուն գործընթացում արարչության արգասիքն արդեն իսկ «ծրագրավորված» է ինչ-որ մեկի կողմից ընկալվելու համար: Իհարկե, հասցեստիքոջ աշխարհընկալումը կարող է լայն կամ նեղ լինել, նա կարող է հեռու կամ մոտ լինել ստեղծագործության գաղափարախոսությանը, սակայն ամեն դեպքում պարտադիր պետք է գոյություն ունենա: Իսկ հեղինակի «ինքն իր համար» ստեղծագործելն այն դեպքն է, երբ արարիչը (ստեղծագործողը) և ընկալողը (սպառողը) համընկնում են, երբ այդ երկու ֆունկցիան կատարում է միևնույն մարդը:

Գեղագիտական գործունեության արգասիքը սպառվում է, սակայն ոչ թե ֆիզիկական սպառման ձևով, երբ այն ոչնչանում է, այլ յուրացման, հոգևոր սպառման ձևով: Այդ պատճառով գեղագիտական գործունեությունը հանդես է գալիս երկու ձևով՝ արտադրության (այսինքն, գեղարվեստական ստեղծագործության ստեղծման) և սպառման (այսինքն, գեղագիտական ընկալման) ձևով: Չի կարելի տարաբաժանել այդ երկու ձևերը: Դրանք փոխկապակցված են և հանդես են գալիս որպես անքակտելի ամբողջություն:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒՅԹՈՒՆ

1. Казин А.А., Художественная ценность и современность, Л., 1986.
2. Леонтьев Д.А., Художественное творчество и психология., М., 1991.
3. Асмус В.Ф., Чтение как труд и творчество., / Вопросы литературы и эстетики, 1961, N2.
4. Сохор А.Н., Социология и музыкальная культура., / Восприятие и оценка искусства обществом и их воздействие на художественное творчество, М., 1974.
5. Паникевич Г.И., О природе художественного восприятия., М.:Знание., 1969.
6. Алексеев Э.В., Андрукович П.Ф., Головинский Г.А., Молодежь и музыка сегодня., М.: Издание Саратовского университета, 1988.
7. Выгодский А.С., Психология искусства, 2-е изд., М.:Книга., 1968.
8. Сохор А.Н., Оценка искусства обществом и их воздействие на художественное творчество., Л., 1980.

Գրիգորյան Լիիք Երվանդի

դաշնակահար, արվեստագիտության թեկնածու, Կոմիտասի անվան ԵՊԿ կատարողական արվեստի պատմության և մանկավարժական պրակտիկայի ամբիոնի պրոֆեսոր

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ մանկավարժ-դաշնակահարի աշխատանքային փորձից

Անհնար է միանշանակ պատասխան տալ թե «ո՞րն է երաժշտության անհատական մեկնաբանումը» հարցին: Այն կարող է հնչել մոտավորապես հետևյալ կերպ. «Երաժշտական ստեղծագործության բովանդակության, ոճի, ձևի, կերպարային բնութագրերի, երաժշտության ընդհանուր մթնոլորտի ըմբռնման միջոցով անհատական բացահայտումը»:

Երբ խոսքը երաժշտական ճշմարտության որոնման, հեղինակային մտահղացմանը համապատասխանող առավել ճշգրիտ մեկնաբանման մասին է, այդպիսի աշխատանքը միշտ էլ հետաքրքիր և հաճելի է: Մեծ երաժիշտների մտորումներն ընթերցելիս՝ զարմացում է նրանց զգուշավորությունը՝ «մեկնաբանություն» հասկացության սահմանման համար բառերի ընտրության հարցում:

Անվանի դիրիժոր Վիլիելմ Ֆուրտվենգլերը գրել է. «Մի կողմից, կարծիք է ստեղծվել, իբր օբյեկտիվորեն ճշգրիտ կատարում գոյություն չունի, իբր ամեն ինչ «ճաշակի հարց է», իբր ամեն ոք և մանավանդ ամեն ժամանակաշրջան իրավունք ունեն ձևափոխելու անցյալը՝ ելնելով անհատական պահանջներից: Իսկ մյուս կողմից ի հայտ եկավ ամեն զգացմունքայնություն խեղդող «նոտային տեքստին հավատարիմ մնալու» մի դրույթ, որը... ձգտում է կատարումը սահմանափակել միայն նոտաներով և նվագագույնի հասցնել անհատական ազատությունը»: «Որպեսզի երաժշտությունը գոնե ինչ-որ չափով ունենա անհատական ձայն, - շարունակում է նա, - այն պետք է պատկանի կատարողին այնքան, որքան իր սեփական մաշկը: Այն պետք է ձուլվի կատարողի հետ, դառնա հենց ինքը՝ կատարողը, որը պետք է ոչ թե պարզապես կատարի այն, այլ սերտաճի դրա հետ բառիս բուն իմաստով» (1. էջ 169):

Իրոք, յուրաքանչյուր ստեղծագործության մեջ կատարողն անկախ տարիքից պետք է զգա կոմպոզիտորի «սրտի բաբախյունը»: Հեղինակը չի կարող նոտաներում գրանցել այն ամենը, ինչով լի է իր հոգին: Կատարողի խնդիրն է իր մտորումներով ու զգացումներով լցնել այն, ինչ անհնար է գրի առնել լոկ նոտային նիշերի օգնությամբ:

Նոտաները դեռ երաժշտություն չեն, ավելի ճիշտ՝ երաժշտությունը դեռ չի սահմանափակվում նոտաներով: Երաժշտության նպատակը նոտաները չեն. «Նոտաները լոկ միջնորդ են հեղինակի մտահղացման և կատարողի միջև, երաժշտություն կազմող հնչյունների ազդանշաններ» (2. էջ 32): Կոմպոզիտորն իր մտորումները, ոգին, իր ամենամկրական զգացումները վերածում է նոտաների: Անկասկած, մի կողմից պետք է ճշգրիտ կատարել կոմպոզիտորի գրածը՝ ճիշտ հաշվել, ճիշտ ֆրագավորել, հստակորեն կատարել հեղինակային նշումները՝ դրա հետ մեկտեղ հաշվի առնելով նաև հազար ու մի այլ մանրուք: Սակայն պետք է հիշել, որ այդ անբարբառ նիշերը՝ կետեր են, գծիկներ և անհատական երևակայությունն աշխատացնելու միակ և ամենահուսալի միջոց:

Նոտաները մաթեմատիկական ճշգրտությամբ կատարելը հավասարագոր է երաժշտության «սպանության»: Մեծ երաժիշտ կատարողները նրանք են, ովքեր տեսնում են ոչ միայն «յոթ նոտան», այլև դրանց ետևում թաքնված անբացատրելին: Նրանք կարող են կենդանի շունչ հաղորդել մահացած նիշերին, կյանք տալ ստեղծագործությանը: Լինել ճշգրիտ, հետևել հեղինակային մտահղացմանը, նոտաների ետևում տեսնել մի անձնավորություն՝ իր կրքերով, մտորումներով, ապրումներով, աշխարհայացքով, այլ ոչ թե աշակերտի նման կատարել ցուցումներ՝ սա է կատարողի գերխնդիրը: Կատարողականությունը ոչ միայն ենթագիտակցական, այլ նաև խորապես գիտակցված գործընթաց է, որն ուղղված է տեքստի յուրացմանը: Կատարողական արվեստն իսկապես ստեղծագործական է: Ռիթմարդ Վազները գտնում էր, որ «ըստ էության, միայն կատարողն է իսկական արվեստագետը: Մեր ամբողջ բանաստեղծական արվեստն ու կոմպոզիտորական աշխատանքը լոկ մի **«ցանկանում են»** է, այլ ոչ թե **«կարող են»**: Այդ **«կարող են»-ի**, այսինքն, բուն արվեստի ստեղծողը կատարողն է միայն» (3. էջ 22): Նոտային նշանները կենդանացնելով՝ կատարողը հետևում է ոչ թե իր իսկ ապրած զգացմունքներին, այլ ուրիշի մտքերին՝ վաղուց վերջնական տեսք ստացած ստեղծագործությանը: Ի տարբերություն կոմպոզիտորի, կատարողը, արտաքինից դեպի ներքին կյանքի հոսքին ընդեմ հանդիպելով, ստեղծում է իր աշխատանքի «արտադրանքը»՝ կենդանի երաժշտություն: Նրա անցած ուղին բնութագրվում է ոչ թե բնականոն զարգացմամբ, այլ հարվածների մանրակրկիտ ընթերցմամբ ու խմբավորմամբ: Կոմպոզիտորը մանրամասներն անխուսափելիորեն ենթարկում է ամբողջականի ընկալմանը. ամբողջն է հաղորդում նրանց զարգացման տրամաբանություն ու ներքին կյանք: Մեկուսացված վիճակում այդ մանրամասներն արտահայտչամիջոցների ընտրության

լայն շրջանակ են ընձեռում կատարողին՝ հեղինակային մտահղացման այսպես կոչված անհատական ընկալման և մեկնաբանման համար: Հաղորդակցվելով երաժշտության աշխարհին, որը «հեղեղված է» որոնումների և մեկնաբանումների անսահման հնարավորություններ պարունակող առանձին թեմաներով ու մոտիվներով, կատարողը, տիրապետելով միայն մանրամասներին, պետք է գտնի հենց այն լուծումները, որոնք կոմպոզիտորը ունկնդրին կառաջացնի ի սկզբանե ուղղորդող ամբողջի պատկերացում: Այդ ժամանակ բոլոր մանրամասները կստանան հատուկ երանգավորում, տեմպ, բնույթ եվ այլն: Հարկ է նշել, որ հարաբերակցությունների դիմամիկ, տեմբրային, տեմպառիթմական տարբերակներից է կախված, թե ինչ ձևով տվյալ ստեղծագործությունը կներկայացվի ունկնդրին: Ստեղծագործողի պատկերացումներին կատարողը «գումարում է» նաև իրենը, իր տաղանդի ուժով կրկնապատկելով արարչության շնորհը:

Ոճի, արտահայտչական առանձնահատկությունների ընկալումը, այս կամ այն կոմպոզիտորի ներաշխարհի ճանաչումը տեղի է ունենում ոչ միայն նվագելիս, այլև լավագույն դիրիժորների, դաշնակահարների, երգեհոնահարների, երգիչների, ջութակահարների կատարմամբ երաժշտությունն ունկնդրելիս: Որոշակի մասնագիտական մակարդակ ձեռք բերելու հավակնություն ունեցող ցանկացած երաժիշտ պարտադիր պետք է անցնի երաժշտության ունկնդրման այդ փուլը:

Անշուշտ, կատարողը պետք է նվագի տարաբնույթ երաժշտություն, տարբեր ժամանակաշրջանների ու ոճերի ստեղծագործություններ: Նոր երկերի ճանաչումը հարստացնում է նրան ինչպես հոգեպես, այնպես էլ մասնագիտական առումով և տեխնիկապես: Վտանգավոր մոլորություն է կարծել, թե Բախի, Մոցարտի, Բեթհովենի և այլ մեծ կոմպոզիտորների երաժշտության մակերեսային իմացությունը ներելի է: Դասական երաժշտության հետ մեկտեղ, դասարանում պետք է ուսումնասիրվի նաև ժամանակակից երաժշտություն՝ երբեք չխզելով կապը ստեղծագործական գործընթացի հետ:

Ուսանողերի ստեղծագործական անհատականության ձևավորման և զարգացման մեջ մանկավարժի մասնակցության չափի հարցում կարևորագույն խնդիր է մասնագիտական աճին նպաստող պայմանների ստեղծումը: Խիստ կարևոր է երիտասարդներին դաստիարակել ինքնուրույն մտածողության կարողությամբ. դասերը պետք է զարգացնեն, այլ ոչ թե միայն ցուցադրեն արվեստի հնարները:

Նախ և առաջ, մանկավարժը պետք է սիրի իր աշակերտներին, հետաքրքրությամբ ուսումնասիրի նրանցից ամեն մեկին՝ հասկանա-

լով, որ օժտվածությունների անհատական առանձնահատկությունները կարող են հուշել աշխատանքի ուղին ինչպես նվազացանկի ընտրության հարցում, այնպես էլ մանկավարժական մեթոդների վերաբերյալ: Արթուր Շնաբելը, որը հայտնի էր ոչ միայն որպես հրաշալի երաժիշտ, այլ նաև որպես մանկավարժ և հոգեբան, պնդում էր, որ «մանկավարժի դերը դարպասներ բացելն է, այլ ոչ թե ուսանողներին այնտեղ խցկելը» (4. էջ 94): Դասերը պետք է ամեն անգամ անցկացվեն նորովի՝ ելնելով ուսանողի բնավորությունից, գիտելիքներից, ընդունակություններից: Ուսանող-մանկավարժ ստեղծագործական միությունը երկու մարդկանց յուրօրինակ համագործակցություն է, որտեղ յուրաքանչյուրն ունի իր աշխարհայացքը, կենսափորձը, վերաբերմունքը երաժշտության նկատմամբ:

Մանկավարժը և՛ երաժիշտ է, և՛ բեմադրիչ, և՛ դերասան, մասամբ էլ՝ երաժշտության պատմաբան: Նա ստիպված է բազմիցս դիտարկել ստեղծագործությունը և՛ որպես ամբողջություն, և՛ մանրակրկիտ մշակված մանրամասներով՝ դրանք ի մի բերելուց և պատրաստի կառույց կերտելուց առաջ: Իսկական մանկավարժին հաջողվում է ուսանողներին երաժշտության նկատմամբ համակել սիրով: Շտեֆան Յվայգի խոսքերով, «պտղաբեր է միայն չափազանցը, չափավորը՝ երբեք»: Ուսանողների հետ ծայրագույն մտասեռնմամբ, ինքնամվիւրումով և կենտրոնացած աշխատող մանկավարժին հատուկ է միայն «չափազանցը»: Այդպիսի մանկավարժն առանձին վերաբերմունք ունի յուրաքանչյուր ստեղծագործության նկատմամբ:

Երաժիշտը չի կարող կոմպոզիտորին ներկայացնել «դպրոցական» մակարդակով: Ինչքան շատ բան գիտի նա հեղինակի և նրա ստեղծագործության մասին, այնքան ավելի մեծ հնարավորություն ունի ուսանողին գտնելու զգացմունքային ներգործության անհրաժեշտ միջոցներ: Չարգացնելով երիտասարդների ինքնուրույնությունն ու անհատականությունը՝ մանկավարժը պետք է ուղղի նրանց միտքը կատարվող ստեղծագործությանը և կոմպոզիտորի երաժշտական կերպարների աշխարհին: Այդ նպատակով նա դասերի ընթացքում իր սաներին պետք է ծանոթացնի հեղինակի նաև այլ ստեղծագործությունների, ընդլայնելով նրանց ընդհանուր պատկերացումները կոմպոզիտորի ժառանգության մասին:

Հնարավոր է զարգացնել հուզական գեղեցկությունն ու բանաստեղծականությունը: Կարևոր է արթնացնել ուսանողի ստեղծագործական երևակայությունը: Նրա բազմակողմանի զարգացումը դասավանդման հաջողության անհրաժեշտ մախապայման է: Շատ բան կարելի է ձեռք բերել միտքը սնուցող գիտելիքների խորության և բազմազանության շնորհիվ: Կիրթ երաժիշտը պետք է լայն տեղեկություն

ունենա կատարվող ստեղծագործության մասին՝ երբ է այն գրվել, ում է նվիրված, ինչպիսի խոհեր ու մտորումներ ուներ կոմպոզիտորը՝ այն ստեղծելիս: Մանկավարժը պարտավոր է մանրակրկիտ ուսումնասիրել, ըմբռնել և զգալ ստեղծագործության տեքստը, հասկանալ նրա իմաստը և մատուցի ուսանողին հեղինակի ներշնչանքից ծնված բոլոր նրբությունները, երանգները, կատարողական կերպարները: Հեղինակի բոլոր ցուցումների նկատմամբ ակնդետ ուշադրությունն այն հիմքն է, առանց որի անհնար է անհատական ընթերցումը:

Մանկավարժին հատկապես դժվար է սովորեցնել աշակերտին նվագել ազատ և ճկուն, սլացիկ, կատարման ռիթմը նմանեցնելով խոսքի ռիթմին: Պակաս կարևոր չէ տեմպերը սանձահարելու կարողությունը, մանավանդ զգացմունքային կիզակետերում. անփոփոխ պահել միջանցիկ տեմպառիթմը այն դեպքում, երբ հուզական պոռթկումի ժամանակ կատարողը տրվում է իր խառնվածքի քմահաճույքին: Այստեղից սկիզբ է առնում ինտոնացիայի արտահայտման «կենդանի շունչը», կատարողական ռիթմին տիրապետելը, լարված ուշադրությունը հնչողության ամեն մի պահի նկատմամբ: Ինչպես նշում է Ջ.Լիսսան, «ժամանակի գործոնը հիմնական դեր ունի ստեղծագործության օրգանական միասնության զգացողության առաջացման մեջ, կազմում է ստեղծագործության կառուցվածքի, դրա կերպարահնչունացիոն էության, այսինքն՝ ստեղծագործության զարգացման ընթացքում դրա միասնության ըմբռնման հիմքը» (5. էջ 374): Երաժիշտ-կատարողի համար խիստ կարևոր է գտնել ճիշտ տեմպը: Ըստ Գրիգորի Գինգերգի դա նշանակում է «ավելի լուրջ տիրապետել տվյալ ստեղծագործության գեղարվեստական կերպարին» (6. էջ 61):

Ռիթմը ցանկացած երաժշտության հիմքն է: Սակայն եթե ռոմանտիկների երաժշտության ժամանակային հոսքի մեջ թույլատրելի են rubato շեղումներ՝ հատուցելով արագացումը բնականոն դանդաղեցմանը, ապա Բախի կամ մյուս դասականների երաժշտությունն այդ իմաստով խիստ է: Բախի երաժշտությունը կատարողին ենթարկում է ժամանակի անսասանության զգացողությանը, կանոնավոր ռիթմին: Սա, հավանաբար, գերմանական երաժշտության ազգային առանձնահատկություններից է:

Ինչ վերաբերում է ռոմանտիկների, մանավանդ Շոպենի երաժշտության կատարմանը, ապա այստեղ հավասարապես անցանկալի են թե՛ զգացմունքային չափազանցումները և թե՛ ռիթմի անհարկ սանձարձակությունը: Նրա երաժշտության մեջ ավելի կարևոր է բացահայտել նրա անկրկնելի ներդաշնակությունն ու հստակությունը: Լեհ հանճարեղ կոմպոզիտորի երաժշտության ականավոր կատա-

րողներից մեկը՝ Վլադիմիր Սոֆրոնիցկին գրել է. «Վերջին տարիներին Շոպենի երաժշտության իմ կատարումը փոփոխություն է կրում. ես ձեռք եմ բերում ավելի պարզ, ավելի խիստ նվագելու ցանկություն...» (7. էջ 60): Պետք չէ մոռանալ նաև ձախ ձեռքի «դիրիժորական» դերի մասին, որը, հարմոնիկ հենք ստեղծելով, նաև «տանում է» երաժշտական գործողությունը:

Ավելորդ չէ նկատել, որ լավ պեղալավորումը ոչ միայն լրացնում է դինամիկ էֆեկտը, այլև հատուկ տեմբրային գործոն է, քանզի ընդհանուր պեղալով միավորված հնչյունները ստեղծում են հարմոնիկ լրացումներ: Պեղալը ոչ միայն հնչերանգ է, այլ նաև յուրօրինակ մի «երկրորդ ստեղնաշար»՝ ստեղծագործության հյուսվածքին օրգանապես ձուլված:

Ստեղծագործության մտահղացման մարմնավորման գործընթացն անսահման է: Նույնիսկ այն ժամանակ, երբ հաղթահարված են տեխնիկական դժվարությունները, իսկ հնչյունային «հարդարումը» գրեթե հասել է ցանկալի նպատակի, ստեղծագործական աշխատանքը դեռ չի ավարտվում. սկսում է կատարված աշխատանքի՝ համերգային բեմահարթակում ստուգման շրջանը: Բեմը, ավա՞ղ, երբեմն զգալիորեն փոխում է կատարման մտահղացումը: Ա.Գուդենիլեյզերի կարծիքով. «Բեմը լավագույն դպրոց է» (8. էջ 61): Ուսանողի կատարման հաջողության, և ընդհանրապես նրա ապագա կատարողական գործունեության համար հաճախ որոշիչ դեր ունեցող ունակություններից է բեմական արտիստականությունը: Դա մի հատուկ ունակություն է, որը կարող է նույնիսկ հակասել ուսանողի ընդհանուր խառնվածքին: Դերասանական խառնվածքի կարևորագույն որակներից է կատարողական տարվածության ունակությունը: Սակավաթիվ են այն կատարողները, որոնք ընդհանրապես չեն հուզվում ելույթից առաջ: Եթե հուզմունքի ազդեցությամբ աշակերտը լոկ ջանում է չմոռանալ տեքստը, չխալվել, հնարավորինս շուտ հեռանալ բեմից, ապա ի՞նչ կատարողական ստեղծագործականության մասին է խոսքը: Այդ դեպքում ուսանողն իսպառ տանուլ կտա մախապատրաստական ամբողջ աշխատանքը: Անհրաժեշտ ազատություն ձեռք բերելու համար բեմին ընտելանալու ընթացքում պետք է չներկայացնել նվազ օժտված ուսանողներին այն պահանջները, ինչ ավելի օժտվածներին, լոկ այն տարբերությամբ, որ շնորհիվ ու երաժշտական ներըմբռնումը յուրովի կփոխակերպեն ամեն ինչ:

Գոյություն ունեն երաժշտությամբ «վարակելու», ուսանողներին հուզական առումով հետաքրքրելու բազմաթիվ ճանապարհներ, այդ թվում՝ դիպուկ կատարողական ցուցադրումը, ժեստի արվեստը՝ յուրատեսակ դիրիժորությունը: Երբեմն բավական է ձեռքի թեթևակի մի

շարժում՝ և ստեղծագործությունը դառնում է ավելի հասկանալի և ըմբռնելի: Երաժշտությանը նվիրված լսարանային զրույցների ժամանակ մեծ է կերպարային նկարագրությունների, համեմատությունների, զուգորդությունների դերը. դրանք օգնում են երաժշտության ընկալմանը, զարգացնում ուսանողի երևակայությունը: Կերպարային կամ այլաբանական ձևով դրանք հիշվում են և օգնում հասկանալու և զգալու այն արժեքավորը, որ կարող է ունենալ ուսանողի և դասախոսի ստեղծագործական շփումը: Այստեղ կարևոր է, որպեսզի ուսանողը, ընկալելով և յուրացնելով այդ ամենը, չկորցնի իր անհատականությունը:

Սույն հոդվածում շարադրված են հեղինակի որոշ եզրակացություններն ու եզրահանգումները, որոնք կուտակվել են նրա մանկավարժական երկարամյա գործունեության ընթացքում:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒՅԹՈՒՆ

1. Фуртвенглер В., Интерпретация — решающая проблема., / Исполнительское искусство зарубежных стран, М.:Музыка, 1966.
2. Коган Г.М., Парадоксы об исполнительстве. Избранные статьи, вып. 3, М.:Советский композитор, 1985.
3. Вагнер Р., Письма. Дневники. Обращения к друзьям., Т.IV.
4. Шнабель А., Музыка и линия наибольшего сопротивления., // Советская музыка, 1964, N2.
5. Лисса З., Проблема времени в музыкальном произведении., / Интонация и музыкальный образ, М., 1965.
6. Гинзбург Г., Заметки о мастерстве. Вопросы фортепианного исполнительства, вып. 2, М.:Музыка, 1968.
7. Софроницкий В., О Шопене., / Вопросы фортепианного исполнительства, вып. 2, М.:Музыка, 1968.
8. Левинсон Л., Тамаркина Р., Какой она запомнилась., // Советская музыка, 1980, N7.

Զալինյան Գոհար Գևորգի

դաշնակահար, Կոմիտասի անվան ԵՊԿ կատարողական
արվեստի պատմության և մանկավարժական պրակտիկայի
ամբիոնի դոցենտ

ԿԼՈՂ ԴԵԲՅՈՒՄԻ «ԼՈՒՄՆԻ ԼՈՒՅՍԸ» ԵՎ «ՀՐԱՎԱՌՈՒԹՅՈՒՆ» ՊՐԵԼՅՈՒԴՆԵՐԸ

19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին ծնունդ առած իմպրեսիո-
նիստական ուղղությունը նոր հայացքի, արժեքային հաստատում էր:
Այն ժխտում էր սալոնային արվեստը, արմատապես բացասում նմա-
նակումը: Ամփջական տպավորությունների, լուսաստվերների խա-
ղերի հարստության արտացոլումը իմպրեսիոնիստների ստեղծագոր-
ծություններում ծառայում է երևույթների մեջ թափանցելու, կյանքի
ընթացքը, շարժման ներքին ուժերը բացահայտելու նպատակին:
Իմպրեսիոնիզմի ուղղության երաժշտական ճյուղը ձևավորվեց
Ֆրանսիայում, 19-րդ դարի 80-90-ականներին: Երաժշտական իմպ-
րեսիոնիզմն ամհնար է դիտել համաշխարհային արվեստի զարգաց-
ման ընթացքից դուրս: Դրա նախադրյալները տեսնում ենք դեռևս
Կուպերենի, Ռամոնի կլավիրային ծրագրային ստեղծագործություն-
ներում:

Երաժշտական նոր գունաբանագների որոնում, անվերջանալի ձգ-
տում առ գեղեցիկը, որոնք վարպետորեն մարմնավորված են կա-
տարյալ ձևերի մեջ: Ահա այս էր երաժիշտ իմպրեսիոնիստների նպա-
տակն ու ձգտումը:

Ֆրանսիական երաժշտական իմպրեսիոնիզմի հիմնադիրն է Կլոդ
Դեբյուսին, որը հենվելով իմպրեսիոնիստ գեղանկարիչների և սիմվո-
լիստների նվաճումների վրա նոր ճանապարհ հարթեց երաժիշտների
համար: Իմպրեսիոնիստ կոմպոզիտորներն սկզբից ևեթ դարձան
ֆրանսիական երաժշտական ակադեմիական ոճի հակամարտողնե-
րը: Նրանք իրենց երկերում մարմնավորեցին թարմ և նոր կենսա-
ըմբռնման հարուստ աշխարհ՝ սեր դեպի բնությունը, կենցաղը, դի-
մանկարը, այդ բոլորն արտահայտելով երաժշտական առանձնահա-
տուկ միջոցներով՝ ձգտում դեպի կերպարայնությունը, պարզ և խո-
րաքափանց ըմբռնումը: Անմախքնաբար կերպով հարստանում է գու-
նաստվերների, լուսաստվերների խաղը, ընդլայնվում երանգապնա-
կը, առաջ են գալիս ակորդային միացումների նոր օրինաչափություն-
ներ՝ հետին պլան մղելով ֆունկցիոնալ կապերը: Տեղի է ունենում ան-
բարեհունչ ակորդների ինքնուրույնացում: Մեծանում են պլագալ

հարմոնիաների մեղմ հոսքը, վառ փայլատակումները, նուրբ, աննկատելի անցումները, զուգահեռաբար շարժվող մեծացրած և փոքրացրած եռահնչյունների շղթաները և այլն: Ընդլայնվում է լադային հիմքը՝ մաժոր-մինորի հետ մեկտեղ կիրառում են հնագույն լադեր, պենտատոնիկա, ամբողջատոն հնչյունաշար: Ինչպես նշում է Ա.Ալշվանզը՝ «Դեբյուսիի լադերը զուրկ են հարուստ ֆունկցիաներից: Փաստորեն, կոմպոզիտորի լադային լեզուն ծայրաստիճան միօրինակ է: Երբեմն ստեղծագործության մի մեծ հատված դառնում է միևնույն համահունչ նվագագարկ» (1. էջ 84-85): Նկատվում է նոր մոտեցում մեղեդային գծի նկատմամբ. երբեմն այն սիմվոլիկ նշանակություն է ստանում և լուծվում հարմոնիայի, ֆակտուրայի, շարժման ընդհանուր ձևերի մեջ: Թեև կառուցվածքներն ունեն արտաքուստ ստատիկություն, բայց և այնպես առկա է ներքին, զուտ երաժշտական տրամաբանված զարգացումը: Փոփոխություններ են կատարվում նաև նվագախմբում. մենակատար գործիքներ են դառնում տավիղը, անգլիական եղջերավողը, լստ ֆլեյտան, սաքսոֆոնը և այլ գործիքներ:

Առանձնապես մեծ են իմպրեսիոնիստների նվաճումները դաշնամուրային ճկուն, նրբագեղ ֆակտուրայի ուրույն ոճի ստեղծման գործում:

Դեբյուսիի ժամանակակիցներն ընդգծում էին նրա՝ փայլուն դաշնակահարի ձայնաարտաբերման արտակարգ փափկությունը, բազմատեսակ կոլորիտի արտահայտումը, հարվածող էֆեկտներից խուսափումը և նրան անվանել են «հնչյունի ազնվական» (2. էջ 24):

20-րդ դարի առաջին կեսին Դեբյուսին գրում է դաշնամուրային փայլուն ստեղծագործություններ, որոնք առանձնանում են բացառիկ հարուստ կոլորիտով, մեղմ, հնչյունային վառ երանգների հակադրությամբ: Այդ ոլորտի գլուխգործոցներից է դաշնամուրային 24 պրելյուդների երկու տետրը (1910-1913): Յուրաքանչյուր պրելյուդ ինքնուրույն, ավարտուն պիես է, իմպրեսիոնիստական պատկեր՝ գաղափարն ընդգծող խորագրով: Ազատություն տալով կատարողին, Դեբյուսին անվանումները տալիս է պիեսների վերջում, որոնց թեմատիկան բազմազան է: Բնապատկերների շարքին են դասվում «Առագաստներ», «Հավամրգի», «Մառախուղ», «Հողմը հարթավայրում», «Ի՞նչ է տեսել արևմտյան քամին» պրելյուդները: Ֆրանսիայում արևմտյան քամին փչում է օվկիանոսից՝ բերելով իր հետ անձրև և մառախուղ: Երաժշտությունը կրակոտ, ռոմանտիկ բնույթի է, որը միաժամանակ հասնում է դրամատիկ թափի (3. էջ 224), «Քայլեր ձյան վրա», «Մեռած տերևներ» և այլն: Դիմանկարներ՝ «Վուշի գույնի մազերով աղջիկը», «Էքսցենտրիկ գեներալ Լավիմը», «Հարգանք մատուցելով Ս.Պիկվիկին (վերջինս Չառլզ Դիկենսի վեպի հերոսն է):

Գրեթե բոլոր պրեյուդներում Դեբյուսին առավելությունը տալիս է լույսին, երանգապնակի գորշ գույներից անցնելով վառ, լուսարձակող, պայծառ գույների:

«Լուսնի լույսը» Դեբյուսիի սիրելի թեմաներից է, որին տվել է յուրօրինակ մեկնաբանում: Այստեղ հանդիպում ենք մեղմ, հարմոնիկ հնչողություն, վարընթաց պասաժների նուրբ պատկեր, կոնտրաստային ռեգիստրների կիրառում, որոնք հակադրվում են «հեռավոր» ակորդներին: Պրեյուդներում հաճախակի հանդիպող, այստեղ ևս կոմպոզիտորն օգտագործել է ակտիվ, փոփոխական ռիթմիկ պատկերներ և այնպիսի շարադրմամբ, կարծես դրանք նշմարվում են շատ հեռվից՝ հիշեցնելով մերթ փափ, մերթ էլ՝ երթ: Դեբյուսին լուսնի լույսի, տոնական խնջույքի հեռավոր հնչողության, իմպրեսիոնիստական ինքնատիպ նոկտյուրններ պատկերելու բացառիկ վարպետներից է: Այստեղ նա լուսաստվերների զգացողությունն է կերտել, իսկ պարային կամ երթային ֆրագմենտում հնչյուններն ի հայտ են գալիս շտրիխի տեսքով:

«Հրավառություն»-ում մեջբերել է «Մարսելիեզի» մեղեդին: Դա հիրավի, թռչող հրթիռի պատկեր է ստեղծում: Կոմպոզիտորը կիրառել է չընդհատվող, հստակ ռիթմիկ շարժման հնարներ (սկզբում դրանք արագ տրիոլներ են՝ սև ու սպիտակ կիսատոների զուգակցմամբ): Հանդիպում են մարտելլատո տրեյներ, արպեջոյատիպ պասսաժներ, որոնք միջամտվում են կարճ, հրամայական բացականչություններով: «Հրավառություն»-ը հետաքրքրական է որպես իմպրեսիոնիստական վիրտուոզ տեխնիկայի ցուցադրում՝ լուսաստվերների էֆեկտի լայն կիրառմամբ և կտրուկ շտրիխներով:

Կանգ առնենք այս երկու պրեյուդի՝ «Լուսնի լույսը (ըստ Լոտիի)» և «Հրավառություն» կենցաղային տեսարանի վրա: Դրանց մեկնաբանումը տարբեր կատարողներ, այդ թվում նաև անվանի Աննա Ամբակումյանը իրենց կատարողական արվեստի բաղկացուցիչ են դարձրել:

Դանաշված դաշնակահարուհի, արվեստի վաստակավոր գործիչ, պրոֆեսոր Աննա Ամբակումյանը շուրջ 30 տարի համերգային շրջագայություններ է կատարել Մովսեսական Միությունում և նրա սահմաններից դուրս: Կ.Իզումնովի և Լ.Օբորինի երբեմնի սանը ժառանգել է ռուսական դաշնամուրային դպրոցի լավագույն ավանդույթները: Նրա կատարումներն աչքի են ընկնում կերպարային վառ բնույթով, ինքնատիպ մեկնաբանություններով: Դեբյուսիի «Հրավառություն», «Լուսնի լույսը» պրեյուդների մեկնաբանումը, դաշնակահարի կատարմամբ արված է 1980թ. «Մելոդիա» ֆիրմայի իրականացրած ձայնապնակի ունկնդրումով: «Լուսնի լույսը» պրեյուդը Ա.Ամ-

բակումյանի մեկնաբանությամբ առանձնանում է թավշյա հնչողությամբ: «Հրավառություն» պրելյուդի կատարումն ավելի ազատ է: Առավել արտահայտիչ ու վառ է հնչում պրելյուդի միջին հատվածը (scherzando), ապա վերստանում նախկին հնչողությունն ու արտահայտչամիջոցների վերարտադրման չափավորությունը:

Փոլ Յակոբսը՝ 20-րդ դարի երաժշտության լավագույն մեկնաբանողներից է: Ծնվել է Նյու-Յորքում, բնակվել Եվրոպայում, համագործակցել Պիեռ Բուլեզի և այլ նշանավոր երաժիշտների հետ: Հանդես է եկել և՛ որպես մենակատար, և՛ որպես անսամբլիստ՝ հավատարիմ մնալով 20-րդ դարի երաժշտությանը: 1961թ-ից Յակոբսը դարձել է Նյու-Յորքի ֆիլհարմոնիայի մենակատարը, իսկ 1974-ից նշանակվել է նույն նվագախմբի կլավեսինահար: Նա Նյու-Յորքի Բրուքլինի քոլեջի պրոֆեսոր է: «Լուսնի լույսը» պրելյուդի Փ.Յակոբսի մեկնաբանումը առանձնանում է դարձյալ թավշյա հնչողությամբ, արձագանքային էֆեկտներով, տեմպն ավելի դանդաղ է, նվագ զգացմունքայնությամբ՝ տուրք տալով կատարողական իմաստին: «Հրավառություն» պրելյուդում նկատելի են կատարողական փայլուն տեխնիկան, պատկերավորությունը, դարձյալ նվագ զգացմունքայնությունը, հնչողությունը թավշայինից անցել է փայլուն հնչողության:

Փիտեր Ֆրենքլը՝ ամվանի դաշնակահար, ծնվել է Բուդապեշտում, վաղ տարիքից էլ ի հայտ եկել նրա կատարողական տաղանդը և 12 տարեկանում փայլուն կերպով տվել է առաջին մենահամերգը: Աշակերտել է պրոֆեսոր Լայոս Հարնադին, որն էլ ուսանել է Բ.Բարտոկի մոտ (Լիստի ակադեմիայում): Սովորել է նաև Լեո Վայների, Ջոլտան Կոդայի, Մարգարիտ Լոնգի մոտ: Սի շարք միջազգային մրցույթների հաղթող է՝ Բուխարեստ, Վարշավա, Բրյուսել: 1958թ-ին Լիստի անվան դաշնակահարների միջազգային մրցույթի մրցանակակիր է, իսկ 1959-ին Ֆրենքլը Ռիո-Դե Ժանեյրոյի միջազգային մրցույթի գլխավոր մրցանակակիր: Նրա դերը մեծ է նաև կամերային երաժշտության ասպարեզում՝ ջութակահար Գեորգի Փաուքի հետ հանդես է եկել կամերային երաժշտության փայլուն մեկնաբանմաներով: «Լուսնի լույսը» Ֆրենքլի կատարմամբ հնչում է հնչյունաարտաբերման մեղմությամբ, պահպանված է եթերայնությունն ու թափանցիկությունը: Դաշնակահարը հնչյունը լսում է նախքան այն վերցնելը, շատ կերպարային է, գունեղ, միևնույն ժամանակ մուրբ: Կատարման մեծահաստիսպ արտահայտչամիջոցներ է կիրառել «Հրավառություն» պրելյուդում՝ ավելին, այստեղ, ստեղծագործությանը համահունչ, կարծես մանր, անչափ փայլուն մարգարտաշար լինի:

Լորին Հոլանդեր՝ սերում է երաժիշտներ՝ Մաքս և Մերի Հոլանդերների ընտանիքից: Երաժշտական ընդունակություններն ի հայտ են

եկել վաղուց՝ նախ չորս տարեկանից նվագել է ջութակ, իսկ 5-ից՝ դաշնամուր: 11 տարեկանում որպես դաշնակահար նվագել է հեղինակավոր Կարենգի Հոլում: Սովորել է Ջուլիարդի երաժշտական բարձրագույն դպրոցում: Մենահամերգներով հանդես է եկել ԱՄՆ-ի, Եվրոպայի հայտնի նվագախմբերի հետ: Առանձնահատուկ հակում ունի ժամանակակից այլ ոճերի նկատմամբ՝ ռոք, ջազ: Պատահական չէ հիշյալ ստեղծագործությունների նրա յուրօրինակ մեկնաբանումը: «Լուսնի լույսը» և «Հրավառություն» պրելյուդներում կատարման բոլորովին նոր մոտեցում է՝ շատ կտրուկ, չոր (հատկապես առաջին պրելյուդում, վերևի հնչյունները վերցնում է առանց պեդալի, ինչը չկար հիշյալ դաշնակահարների մոտ), պահպանված են ավանգարդիստական կատարողական չափանիշները: Այս ամենին զուգահեռ աչքի է զարնում հնչողության փայլը, հնչեղությունը, կերպարայնությունը: «Հրավառություն» պրելյուդի միջին մասում (Scherzando) որը հակադրվում է նախորդող և հաջորդող հատվածներին, նկատվում է դինամիկայի ուժգին աճ, փոքր ինչ կտրուկ:

Ալեքսեյ Լյուբիմով – աշխարհահռչակ դաշնակահար, աշակերտել է Հ.Նեյհաուզին, ապա Լ.Նաումովին: Այսօր նա ամբողջ աշխարհում հայտնի է ժամանակակից երաժշտության իր ինքնատիպ, բացառիկ կատարումներով: Միջազգային մի քանի մրցույթների դափնեկիր է, որոնց թվում 1965թ. Ռիո-Դե Ժանեյրոյի միջազգային մրցույթի առաջին մրցանակակիր: «Լուսնի լույսը» պրելյուդի նրա կատարումն առանձնանում է թավշյա փայլուն հնչողության միջինով, տեմպն ավելի զուսպ է, խորհրդավոր, «միստիկ» բնույթի է, անչափ կերպարային, գունեղ: Կոմտրաստային հատվածներում էլ պահպանված է ուժգնության զսպվածություն: «Հրավառություն»-ն ընկած է նրբության չափազանցության մեջ, առկա է ներքին դինամիզմ, ավելի թեթև է, եթերային: Միջին մասից, որ նախորդների մոտ առկա էր դինամիկայի կտրուկ աճ, Լյուբիմովն այն անցնում է աննկատ, ապա հաջորդող նվագումը էլ ավելի է մարում, կարծես հեծվից է նշմարվում: Ինչպես դաշնակահարի բոլոր կատարումներում, այստեղ ևս նա ի հայտ է բերում տեխնիկայի փայլուն տիրապետում, երաժշտության յուրօրինակ զգացողություն, լռությունն անգամ լսում է:

Ստանիսլավ Նեյհաուզ – նշանավոր դաշնակահար Հենրիխ Նեյհաուզի որդին, ժառանգելով հորից կատարողական արվեստի նրբին գաղտնիքները ունկնդրին ներկայացել է առանձնահատուկ ոճով: Նրա կատարումներում առկա են մտքի և զգացմունքի բարձր կուլտուրա, հոգեբանական նյութանքների հարստություն, երաժշտական զգացումների նրբություն: Նա հուզական վիրտուոզության կերպար է: Հոր, տատիկի՝ Օլգա Նեյհաուզի մոտ պարապելուց հետո ուսումը

շարունակել է Վալերիա Լիստովայի մոտ (Գնեսինների անվան երաժշտական դպրոց), իսկ կոմսերվատորիայում աշակերտում է Վլադիմիր Բելովին: 50-ական թվականներին հայր և որդի Նեյխաուզները համերգային շրջագայություններ են կատարել՝ նվագազանկում ընդգրկելով Մոցարտի, Շումանի, Դեբյուսիի, Ռախմանինովի ստեղծագործությունները: Ս.Նեյխաուզի կատարումներն աչքի են ընկնում բացառիկ ազատությամբ՝ իմպրովիզացիոն բնույթով, ունկնդրին փոխանցում կենդանի, վառ և գունեղ կերպարներ: Ամեն անգամ նա հանդես էր գալիս նորովի, երբեք չէր պահպանում կատարողական միատեսակություն, ստատիկություն:

Դեբյուսիի հիշյալ պրելյուդները նրա մեկնաբանմամբ հնչում են առանձնակի փայլով, մանրանվագային նրբին քնքշությամբ, վառ, գունեղ, կենդանի շնչով համակված: Կոմտրաստներն ընդգծված են սահուն անցումներով, ապահովված է ուժգնության մեղմ դաշտ:

Ի մի բերելով տարբեր ոճի այդ դաշնակահարների կատարումները, կարելի է նկատել, որ նրանցից յուրաքանչյուրի մեկնաբանումն ընդհանուր առմամբ մեկ առանցքի շուրջ է պտտվում՝ պատկերել իմպրեսիոնիստական մթնոլորտն իր կերպարներով, գույներով, եթերայնությամբ, թափանցիկությամբ, կենդանի շնչով, լույսի և ստվերի խաղերով:

Դեբյուսիի դաշնամուրային 24 պրելյուդները նրա պիանիզմի հանրագումարն են կազմում, ավելին՝ նրա ստեղծագործության «միկրոկոսմոսը»: Ունեն բացառապես կատարողական հետաքրքրություն, որոնք հարստացրել են դաշնամուրային գրականության անկրկնելի էջերը: Այդ պրելյուդներն աշխարհի անվանի դաշնակահարների նվագազանկ են ընդգրկվել և հաճախ կատարվում են բազմաթիվ երկրներում:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒՅԹՈՒՆ

1. Алышванг А., Дебюсси, М.: Музгиз., 1935.
2. Кремлев Ю., Клод Дебюсси, М.: Музыка., 1965.
3. Мартынов И., Клод Дебюсси, М.: Музыка., 1964.

Իսրայելյան Անահիտ Ռաֆայելի

դաշնակահար, Կոմիտասի անվան ԵՊԿ կամերային
անսամբլի ամբիոնի դոցենտ

ՊՐՈԿՈՅԵՎԻ ՋՈՒԹԱԿԻ ԵՎ ԴԱՇՆԱՍՈՒԻԻ ԵՐԿՈՒ ՍՈՆԱՏՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ

Աշխատանքում, երաժշտական գրականության ուսումնասիրության հիման վրա ներկայացված է Պրոկոֆևի ջութակի և դաշնամուրի երկու սոնատների վերլուծությունը, երկու գործիքի փոխադարձ կապը, որոշ տեմպային, թեմատիկ, լադային, հարմոնիկ խնդիրներ, որոնք հետաքրքրական կլինեն հատկապես ուսանողների և դասախոսների համար:

Կամերային անսամբլի դասարանում շատ կարևոր է երկացանկի ճիշտ ընտրությունը: Ուսումնառության սկզբնական շրջանում ուսանողի ստացած գիտելիքների ու փորձի շնորհիվ աստիճանաբար բարդանում և բազմաբնույթ են դառնում նրա հետագա ծրագրերը: Անցնելով դասական, ռոմանտիկ կոմպոզիտորների ստեղծագործությունների վրա հիմնված մի դպրոց, ուսանողը ի գործ է ճիշտ ընկալել և մեկնաբանել XX դարի երաժշտությունը:

Մեր կարծիքով կարելի է ներածական խոսքով, ընդհանուր ուրվագծերով ուսանողին ներկայացնել XX դարի արվեստի մի քանի ճյուղ (գրականություն, կերպարվեստ, երաժշտություն):

Ինչպես հայտնի է, արվեստը, մասնավորապես երաժշտությունը անբաժան են գաղափարախոսությունից: Այն գիտակցորեն կամ ենթագիտակցորեն արտացոլում է տվյալ ժամանակաշրջանի քաղաքական կոնցեպցիաները:

Պրոկոֆևր վառ անհատականություն է, որի ստեղծագործությանը հատուկ են երաժշտական կերպարների մեղմությունը, սուր երգիծանքը, էպիկական փառափառությունը: Նրա մեղեդիները կարող են լինել շատ երազկոտ, կամ «չոր»: Պրոկոֆևրի հատուկ են նաև սկերգոյատիպ, աշխույժ տրամադրությունը, հաճախ քայլերգային, կամ պարային ռիթմերը: Կոմպոզիտորի երաժշտությունը շատ հարուստ է և արտահայտիչ (1. էջ 169):

Ս.Պրոկոֆևր ապրել և ստեղծագործել է XX դարի առաջին կեսին: Նա ապրել է I համաշխարհային պատերազմի, Հոկտեմբերյան հեղափոխության, ստալինյան ռեպրեսիաների, II Համաշխարհային պատերազմի ժամանակաշրջանը: Եվ բնական է, որ այս բոլոր

երևութներն իրենց ազդեցությունը թողել են Պրոկոֆևի ստեղծագործությունների վրա:

Ստեղծագործական առաջին փորձերը կատարել է դեռևս 6 տարեկան հասակում: Ամբողջ կյանքի ընթացքում կոմպոզիտորը գերադասել է ընթանալ նորարարի բարդ, համարձակ ուղիով, այլ ոչ թե արդեն հարթեցված, ծեծված ճանապարհներով: Նրա ստեղծագործությունները խորհրդանշեցին երաժշտական նոր դարաշրջանի սկիզբը, որը փոխարինեց ճոխությանն ու երկարաբանությանը հակված ուշ ռոմանտիզմին և հակադրվեց նրբին և փխրուն արվեստ սերմանող իմպրեսիոնիզմին: Պրոկոֆևի երաժշտությունը աչքի է ընկնում առնական, փոքր-ինչ կոպտությամբ, անսահման կենսասիրությամբ, ակտիվությամբ և դինամիզմով:

Կոմպոզիտորի հետաքրքրությունների շրջանակը շատ լայն է և բազմաժանր: Նրա երաժշտական ժառանգությունը հարուստ է թե մեծ (սիմֆոնիա, բալետ, կանտատա, կոնցերտ, սոնատա և այլն), թե փոքր կտավի (մանրանվագ, պիես, ռոմանս և այլն) ստեղծագործություններով:

Հիմնալի դաշնակահար Պրոկոֆևը ամբողջ կյանքի ընթացքում սեր և հետաքրքրություն է դրսևորել ջութակի նկատմամբ, այս գործիքի գեղարվեստաարտահայտչամիջոցները համարելով շատ հարուստ, բազմազան և անսպառ (2. էջ 102): Նա մեծ հաճույքով էր կատարում ջութակի և դաշնամուրի սոնատները, բազմիցս ելույթներ ունենալով զանազան երկրներում, տարբեր ջութակահարների հետ: Հիմնալի գիտեր Մոցարտի, Բեթհովենի, Բրամսի, Ֆրանկի, Հենդելի և Դեբյուսիի ջութակի սոնատները: Իր ստեղծագործական կյանքի ամբողջ ընթացքում համագործակցել է բազմաթիվ ջութակահարների (Պավել Կոխանսկու, Յոզեֆ Սիգետիի, Յաշա Հայֆեցի, Սամուիլ Դուշկինի, Մարսել Դարյեի, Ռոբերտ Սյոտանսի, Ալեքսանդր Մոսկովսկու, Դավիթ Օյստրախի, Դմիտրի Ֆիգանովի, Վասիլի Ըրիմսկու, Բորիս Գոլդշտեյնի) հետ: Այս ջութակահարները մասնակցում էին Պրոկոֆևի կամերային և ջութակի համար գրված ստեղծագործությունների տարածման գործին, իսկ նրանցից ոմանք օգնում էին կոմպոզիտորին խմբագրել ստեղծագործությունները:

Դեռ պատանական տարիքում նա գրել է ջութակի իր առաջին, դո մինոր Սոնատը: Ջութակի սոնատների ստեղծմանը նախորդում էր ժամանակակից և դասական սոնատների մանրակրկիտ ուսումնասիրությունը: Ինչպես արդեն նշվեց, մեծ է եղել ջութակահարների դերը նրա կյանքում: Անհրաժեշտ է նշել հատկապես Դավիթ Օյստրախին, որը մեծ ներդրում ունի կոմպոզիտորի ստեղծագործությունների տարածման և խմբագրման գործում: Հենց նրան է նվիրված կոմպոզիտո-

րի ջութակի առաջին Սոնատը: Օյստրախի հետ համագործակցելու շնորհիվ իրականացավ Ֆլեյտայի սոնատի ջութակի տարբերակը (օր. 94):

Ջութակի առաջին Սոնատ (օր. 80)

«Երաժշտությունից ստացած տպավորությունը մեծ էր, - գրել է Դ.Օյստրախը, - կարծես ներկա ես մի շատ մեծ և նշանակալի երևույթի և առանց չափազանցության պնդում եմ, որ տասնյակ տարիների ընթացքում, համաշխարհային կամերային, հատկապես ջութակի համար գրված այսքան գեղեցիկ և խորիմաստ երաժշտություն ես չեմ լսել» (3. էջ 213):

1938 թվականին, Փարիզում, Հենդելի երաժշտության տպավորության տակ Պրոկոֆևը մտահղացավ գրել այս սոնատը: Այն ավարտեց միայն 8 տարի անց, 1946 թվին: Այսպիսով, առաջին Սոնատը ավարտեց Սոնատի օր. 94 ջութակի տարբերակը գրելուց հետո, որը հայտնի է որպես երկրորդ Սոնատ (օր. 80): 1938 թվին, «Ալեքսանդր Նևսկի» կանտատից հետո Պրոկոֆևը մտադրվեց գրել ջութակի f-moll Սոնատը:

F-moll Սոնատը էպիկական բնույթի լավագույն ստեղծագործություն է, որտեղ հառնում են հայրենիքի անցյալի պատկերները, կոմպոզիտորի երազանքը իր ժողովրդի ճակատագրի մասին: Ընդամենը մի քանի օրվա ընթացքում ուրվագծվեց առաջին մասի սկիզբը, երկրորդ մասի համարյա ամբողջ էքսպոզիցիան և երրորդ մասի հիմնական թեմաները: Առաջին սոնատում շարունակվում էին հայրենասիրական հերոսական գաղափարները, որոնք իրենց վառ մարմնավորումն ստացան «Ալեքսանդր Նևսկի» կանտատում և «Իվան Ահեղ» կինոնկարի համար գրված երաժշտության մեջ:

Այս ստեղծագործությունների հայրենասիրական հերոսական գաղափարները շարունակվում էին առաջին Սոնատում (2. էջ 102): Կոմպոզիտորի ստեղծագործական լեզուն աստիճանաբար էվոլյուցիայի է ենթարկվում: Նա որոնել է նորանոր արտահայտչամիջոցներ, որոնք կհարստացնեին և կընդարձակեին ռուսական ժողովրդական երաժշտության շրջանակները: Այս ժամանակաշրջանի ստեղծագործություններում մեծ տեղ է հատկացվում էպիկական «բիլինա-յի» ոճին և այն դառնում է կոմպոզիտորի շատ ստեղծագործությունների գլխավոր սկզբունքը, այդ թվում և ջութակի առաջին Սոնատում: Այս սոնատի առաջին կատարողը Դ.Օյստրախն էր: Նա գրում է. «Ես խորապես համոզված եմ, որ իր բովանդակությամբ և մտահղացման զարմանալի դրսևորմամբ, երաժշտական կերպարների գեղեցկությամբ (բավական է հիշել դանդաղ մասը) այս ստեղծագործությունը կարող է դրվել համաշխարհային գրականության մեջ եղած և միջազ-

գահին ճանաչում գտած ցանկացած սոնատի կողքին» (3. էջ 214):

Սոնատի առաջին մասը *Andante assai* իր բնույթով խիստ է, կարծես ներածություն լինի սոնատային ձևի համար: Երկրորդ մասը սոնատային ձևում է *allegro*, հաստատական, բուռն, լայնածավալ օժանդակ բեմայով: Երրորդ մասը դանդաղ է, թեթև և նուրբ: Չորրորդ մասը նպատակալաց է, գրված շատ բարդ չափով:

Ինչպես վերը նշվեց, առաջին մասը (*Andante assai*) իր բնույթով խիստ է և կարծես ողբերգական մախաբան լինի: Այստեղ հնչում է երկու բեմա-կերպար: Առաջինը տարեգրի անշտապ, խիստ, «վաղուց տեղի ունեցած» դաժան պատմության մասին է: Այս բեմայի մեղեդային պատկերը (համաչափ առաջընթաց է կվինտային «քայլերով») և ֆակտուրան (ցածր ռեգիստր, խիստ «ասկետիկ» օկտավային ունիսոն) վկայում են նրա էպիկական կառուցվածքի մասին:



Որպես առաջին բեմայի վառ հակադրություն հնչում է միջին էպիկոլոր *Andante* (*poco più animato*)



Այս կերպարը մարմնավորում է ժողովրդական ողբ: Մեղեդին խորապես գունազարդված է ռուսական ինտոնացիաներով, և ֆակտուրան համապատասխանում է ավանդական ռուսական եռաձայն երգին. ջութակի երկձայն երգի կուլմինացիոն պահին միանում է դաշ-

նամուրը, որը իրականացնում է Andante-ի առաջին էպիզոդը, որը քեմայում ներկայանում է առնական սկզբունքով, իսկ ջութակը, իրականացնում է գլխավոր դերը՝ երկրորդ էպիզոդում, առաջինի հետ կապը քնարականությունն է: Առաջին մասի երկու քեմաներն էլ հնչում են կենտրոնական կուլմինացիոն էպիզոդում: Ջութակի երգին զուգահեռ, ժամանակ առ ժամանակ, կրկնվում են սկզբի ահեղ ինտոնացիաները: Հեղինակը ընդգծելու համար դրանք առանձնացրել է շեշտով:

Շատ տպավորիչ է առաջին մասի ռեպրիզան: Այն ձևափոխված է հարմոնիկ տեսակետից և հագեցած՝ սեքստակորդների շղթայով: Գլխավոր քեման հնչում է չարագուշակ ահագանգի նման: Ջութակի «սառը» գամմայատիպ հատվածները լրացնում են էպիկական պատկերը:

Երկրորդ մասը (allegro) խտացնում է ամբողջ Սոնատի դրամատորգիական լուծումը: Այնտեղ նկարագրված են կովի դաժան տեսարաններ, արյունահեղ մարտեր, պատկերված անմիջական ձևով: Կոմպոզիտորը այս մասը վերնագրել է Allegro brusco – կտրուկ, կոպիտ allegro:



Գլխավոր քեման կտրուկ է, սուր անկյուններով (marcatissimo e pesante): Այն նկարագրում է թշնամու տձև կերպարը, նրա կոպիտ ոտնձգությունները: Պրոկոֆևրը այստեղ շռայլորեն օգտագործել է կտրուկ դիտմանն արտահայտչամիջոցներ, փոքր սեկունդաների շղթա, պոլիտոնայնություն, երբեմն երաժշտությունը ի հայտ է գալիս ատոմալ միջավայրում: Այս արտահայտչամիջոցները միանգամայն արդարացված են: Վայրի, բարբարոս բնույթը փոխանցվում է տեմբրի միջոցով, դաշնամուրի «չոր» օկտավաները և ջութակի հատուկ կոշտ, երբեմն էքսպրեսիոնիստորեն կոպիտ հարմոնիաները ընդգծվում են շեշտված marcato հարվածելով աղեղով ջութակի լարերին:

Գլխավոր քեման կարծես ջութակի և դաշնամուրի նվագաբաժին-

ների միջև մի կտրուկ, իրար ընդհատող ինտոնացիաների երկխոսություն լինի, որն ուղղակի տեսանելի է դարձնում բուք, մահաբեր ուժի ներխուժումը: Այս չարագուշակ կերպարին հակադրվում է «ոյուցազնական» օժանդակ պարտիան (eroico), որն ունի առնական կերպար և ընգծված քնարականություն: Այս մեղեդու հիմնական առանձնահատկությունն է ռուսական լայն օկտավաներով շարժումը, որն այստեղ հնչում է որպես զինվորական գործողությունների հրավեր: Էքսպրզիցիայի եզրափակող մասն ամենից ավելի գործունյա է իր տրեմերով, որի ինտոնացիաները առաջացել էին գլխավոր և օժանդակ թեմաները կապող էպիզոդի ընթացքում:

Մշակման մասում լայն զարգացում են ստանում երկու allegro թեմաները: Գլխավոր թեմայի երկրորդ տարրը մույնպես ենթարկվում է ինքնուրույն զարգացման: Նրա խստաշունչ ինտոնացիաների մեջ պատկերված են դաժան մարտերի արձագանքները: Հենց այս ինտոնացիաներից սկիզբ է առնում նոր թեմա (մշակման մասի կենտրոնական հատվածում) Poco più tranquillo, որն իր բնույթով ավելի մեղեդային է և հանգիստ:



Ի դեպ, այս թեման մույնպես շարադրվում է արդեն մեզ ծանոթ, ժամանակ առ ժամանակ հնչող, չարագուշակ «Երեք հարվածների» (գլխավոր պարտիայի) ֆոնի վրա: Այս հնարքը հնարավորություն է տալիս զարգացնել և միահյուսել սոնատային ձևի բոլոր հատվածները: Ռեպրիզան ավելի հակիրճ է: Գլխավոր թեման այստեղ հնչում է միայն մեկ անգամ և կողայում, տրիոյների հորձանքում այն վերջնականապես հաստատում է «պատերազմական» տրամադրությունը:

Երրորդ մասը (Andante) քնարական է, դաժան սոնատային ձևից հետո հնչում է որպես լիցքաթափում: Այս մասի հիմքում՝ կանացի գեղեցկությամբ օժտված հիմնական մեղեդին tenero et espressivo (նուրբ և արտահայտիչ) նման է հոգեզմայլ օրորոցային, որը հնչում է համաչափ ելևէջող ֆոնի վրա:



26



Երգային բնույթին համապատասխան, գլխավոր թեման համարյա միշտ հանձնարարվում է ջութակին: Որոշ տեղերում մեղեդին կրկնօրինակվում է դաշնամուրի բասերում, այս ֆակտուրան ի հայտ է գալիս զգացմունքների լարվածության զագաթնակետին: Կերպարը ամբողջականացնելու գործում մեծ դեր է կատարում օստիննատային նվագակցությունը (սեքստոլներով ֆիգուրացիան): Երրորդ մասն իր բնույթով հովվերգական է: Այն ավելի ընդգծված է ռեպրիզայում: Andante –ի միջին մասը մի քիչ ավելի աշխույժ է, նրբագեղ և հիմնված կարճ, բայց արտահայտիչ դարձվածքի վրա: Այս հատվածի երաժշտությունը մոտ է Պրոկոֆևի բանաստեղծական կերպարներով հագեցած վալսերին: Այստեղ մեղեդին նուրբ է, փխրուն և շատ երագլուտ: Միջին էպիզոդում երաժշտությունը աստիճանաբար աշխուժանում է, ձեռք բերում զգացմունքային հագեցած և թանձր գույներ: Վալսի մեղեդին ներբաշվում է մեկ այլ միջավայրի մեջ և հետզհետե միաձուլվում նոր, ավելի դրամատիկացված հյուսվածքում: Առաջին հատվածի գրեթե լրիվ կրկնությունից հետո կենտրոնական էպիզոդի զգացմունքների պայթյունին որպես հակակշիռ հետևում է աստիճանական մարումը, երաժշտության հանգստացումը: Հեղինակի այս հայտնագործության միջոցով տևական դանդաղեցումը բերում է հանգիստ վիճակի:

Չորրորդ մասը – Allegrissimo Սոնատի դրամատուրգիական զարգացման զագաթնակետն է: Այս մասի էպիկական, հանդիսավոր երաժշտությանը միաձուլվում են «պատերազմական» երկրորդ մասի և առաջին մասի բիլինային հատվածները: Այս ամենը ֆինալին տա-

լիս է ընդհանրացնող վերջաբանի նշանակություն: Ի տարբերություն սովորական սոնատային Allegro – ի Պրոկոֆևի այս սոնատում գլխավոր թեման իր սկզբնական ձևով հնչում է երկու անգամ (էքսպոզիցիայում և մշակման մասում), երրորդ անգամ այն հնչում է Poco meno: Օժանդակ թեման (poco più tranquillo) բացի էքսպոզիցիայից հնչում է մաս կողայի վերջին տակտերում իբրև մարդասիրական սկզբունքի և բարձր գաղափարների մուկետիկ: Մշակման մասում ի հայտ են գալիս առանձին, անճանաչելիության հասած օժանդակ թեմայի տրանսֆորմացիայի ենթարկված պատառիկներ, կոնտրապունկտով միացած գլխավոր թեմայի հետ: Ռուսական ժողովրդական երգի տարրերը դրսևորված են գլխավոր թեմայի լադային-մեղեդային կառուցվածքի յուրահատկությունների (լիդիական լադ), ինչպես մաս ռիթմի մեջ (5/8, 7/8, 8/8):

Գլխավոր թեման հետևողականորեն անցնում է տոնայնական տարբեր հարթություններով (F-dur, B-dur, C-dur և նորից F-dur): Տպավորություն է ստեղծվում, որ այս մեղեդին կատարում են երգչախմբի տարբեր ձայները: Եզրափակիչ մասում նորից հնչում են սոնատի երկրորդ մասի «երեք ահեղ հարվածները», հիշեցնելով ողբերգական իրադրությունների մասին: Հեղինակը այս ձայները նշում է ff feroce (ահեղ, դաժան): Շատ տպավորիչ է ֆինալի եզրափակող հատվածը. նախ հնչում է Poco meno եպիգոդը (ռեպրիզա-կոդա), որտեղ մեկը մյուսին ընդհատելով լսվում են որոշ չափով ձևափոխված գլխավոր թեման և զամմայատիպ դարձվածքները, ավետելով առաջին մասի բիլինային կերպարի վերադարձը:

Այնուհետև հնչում է «վերջաբանը»: Andante assai, comme prima:

Պրոկոֆևը բազմիցս դիմում է առաջին մասի կրկնողությանը: Այն հնչում է մաս ցիկլի մյուս մասերում և հատկապես ֆինալում, ընդգծելով ստեղծագործության հիմնական կերպարը, նրա սկզբնական մտահղացումը:

Այս Սոնատը (օր. 80) առաջին անգամ կատարել են Դ. Օյստրախը և Լ. Օբորինը 1946 թվականի հոկտեմբերի 23-ին, Մոսկվայում:

Երկրորդ Սոնատ (օր. 94 bis)

Սա օր. 94 Ֆլեյտայի և դաշնամուրի Սոնատի տարբերակն է: Այս ստեղծագործությունը հեղինակը ավարտել է ավելի շուտ, քան առաջին Սոնատը՝ 1943 թվին: Սոնատի ջութակի փոխադրումը Դ. Օյստրախի մտահղացումն է: Դա դժվար չէր, քանի որ ֆլեյտայի նվագաբաժնի ջութակի փոխադրումը հարմար է, փոփոխությունները նվագազույն էին և դրանք վերաբերում էին միայն շարիխներին: Դաշնամուրի նվագաբաժինը մնաց անփոփոխ: Ի տարբերություն առաջին Սոնատի էպիկական հերոսական բնույթին, երկրորդ Սոնատը քնա-

րական է, պարզ և ունի նուրբ կերպարներ: Հեղինակը գրում է. «Ես ուզում էի որ Սոնատը հնչի լուսավոր և թափանցիկ գույներով»: Կոմպոզիտորի համար օր. 94 Սոնատը յուրօրինակ լիցքաթափում էր «Պատերազմ և խաղաղություն» օպերայից, դաշնամուրային 7-րդ Սոնատից և այլ մեծակտավ երկերից հետո:

«Դասական» ստեղծագործությունները կոմպոզիտորի կյանքում մեծ և ծանրակշիռ տեղ են գրավում: XX դարի «նեոկլասիցիստական» տենդենցները իրենց յուրահատուկ վերաիմաստավորումն ստացան Պրոկոֆևի երկերում: Կոմպոզիտորը, նկատի ունենալով «հին, բարի ժամանակները», երբեմն կես կատակ, երբեմն լուրջ, ժամանակակիցներին ասել է. «Ինչ հսկա ուժ է թաքնված վաղեմի, երբեմն հին թվացող արվեստի մեջ»: Նա յուրովի է համադրում «հին» և «ժամանակակից» հասկացողությունները, և երևի հենց այստեղ է Պրոկոֆևի ստեղծագործությունների հմայքը:

Երկրորդ սոնատում դասական խիստ կառուցվածքը, պարզությունն ու թափանցիկությունը զուգահեռ կապի մեջ են ժամանակակից այնպիսի հնարների հետ, ինչպիսիք են մաժոր-մինորային վերադասավորությունները, մոդուլյացիոն շարժումները կես տոնով, մեկ տոնով և այլն:

Երկրորդ սոնատին բնորոշ են կերպարների հստակությունը և պարզությունը, նրանց բնական զարգացումը: Վառ կերպով նշվում են կառուցվածքի սահմանները յուրաքանչյուր մասում, ընդգծելով մտքի կանոնավոր դասավորությունը, առնականությունը և այդ երաժշտության կանոնավոր, «առողջ» ոգին:

Առաջին մասը – Moderato 4/4: Այստեղ գերիշխում է պատանեկան ուրախ տրամադրությունը:



Թեմաները լակոնիկ են և առհասարակ ամբողջ էքսպոզիցիան հակիրճ է, գերծ ավելորդաբանությունից: Հեղինակը դնում է կրկնության նշան՝ հնարը և կրկնում է Հայդնի և Մոցարտի ավանդույթները (2. էջ 102): Այստեղ նրանց միջև, չկան կերպարների վառ հակադրություններ, դրամատիկ բախումներ, սուր կոնֆլիկտայնություն: Գլխա-

վոր թեման մեղմ է, երազկոտ: Այն աստիճանապար փոխվում է բնույթով իրեն հարազատ, թեթև օժանդակ թեմայի: Կոմպոզիտորի սիրելի կետագծված ռիթմը մեղեդուն տալիս է անկրկնելի նրբագեղություն, միևնույն ժամանակ քնքուշ, փաղաքշական տրամադրություն: Օժանդակ թեմայում ի հայտ են գալիս մոդուլյացիոն շարժումներ կես տոնով կամ մեկ տոնով: Շատ կարճ է եզրափակող պարտիան: Այն ընդամենը բաղկացած է չորս տակտից: Այս թեման որոշ չափով ընդլայնվում է առաջին մասի վերջում, որտեղ հանդես է գալիս որպես կոդա, չնայած մի քիչ ավելի ծավալուն չափերին, այն այստեղ ևս հակիրճ է: Ոչ մեծ մշակման մասում անսպասելի ի հայտ են գալիս ֆանֆարային ինտոնացիաներ, որոնք սկիզբ են առել գլխավոր թեմայի տրիոլային ֆիգուրացիաներից: Նրանք հանդես են գալիս որպես այս մասի «շարժիչ ուժ», որն ամբողջ մասին աշխուժություն է հաղորդում: Առաջին մասն ավարտվում է հանգիստ ու խաղաղ:

Սոնատի երկրորդ մասը սկերցո է (Presto 3/4): Սկերցոզայնությունը այն ոճն է, որը հատկապես մոտ է Պրոկոֆևի ստեղծագործությանը: Այստեղ գեղարվեստական կերպարի դիապազոնը շատ մեծ է՝ բարի կատակից մինչև խիստ հեզմանք, կամ չարախնդրություն: Երկրորդ սոնատի սկերցոյում (II մաս) գերիշխում է բարի կատակը և ոչ թե չարախնդրությունը: Առաջին թեմայի կատակային բնույթը կապված է մասնավորապես երկու և երեք քառորդայնության միացումից: Ըստ էության թեման երկու քառորդ է, բայց շարադրված է 3/4 չափում:



Թեթև, քիչ պարային առաջին թեման փոխվում է երկրորդով: Այս մեղեդին թեև արտաքնապես մի քիչ սուր է, բայց խորքում թաքնված են քնարական զգացումներ: Կարճ, վալսային հատվածները հնչում են որպես անցյալի հիշողություններ: Շատ ինքնատիպ է սկերցոյի միջին մասը: Մեղեդին երգային է, քմահաճ մաժոր-մինորային խաղով: Դաշնամուրի նվագակցության մեջ հնչում են «դատարկ» կվինտաներ, իսկ երաժշտության կերպարային ամբողջ կառուցվածքը հիմնված է հնագույն ռուսական երաժշտության վրա:



Այս փոքրիկ էպիզոդը շատ ճկուն կերպով կապում է «հնագույն-ռուսական» թեման գլխավոր մեղեդու ինտոնացիաների հետ և հանգեցնում ռեպրիզային, որը համարյա նույնությամբ կրկնում է սկզբի հատվածը: Սկերցոն ավարտվում է սեղմված, նպատակալաց կողա-յով:

Երրորդ մասը դանդաղ է, քնարական Andante, պարզ է, քափան-ցիկ, կարծես ջրաներկով նկարած, հագեցած տիպիկ ռուսական հո-գեհարազատ, ջերմ գեղեցիկ մեղեդիով:



Առաջին հատվածը (Andante, գրված պարզ եռմասանի ձևով) իր մեջ խտացնում է ամբողջ մասի երգային կերպարը: Զարդարված է գեղեցիկ հարմոնիաներով, անսպասելի մոդուլյացիոն շարժումներով, ինքնատիպ ենթաձայներով: Այս բոլորը նպաստում են պատկերելու երագող, խորանձնական, մտերիմ բնույթը: Ավելի աշխույժ է միջին էպիզոդը, որը ոչ թե չի հակադրվում առաջատար թեմային, այլ նոր հիմքերի վրա շարունակում և զարգացնում է այն:

Շատ հետաքրքրական են կառուցվածքը և իմպրեսիոնիստական գույները: Ֆիգուրացիոն զարդարանքները շարունակում են իրենց համաչափ, հանդարտ հոսքը ռեպրիզայում: Առաջին թեման հնչում է դաշնամուրով, կապվելով միջին էպիզոդի սեքստոլների հետ, որոնք կատարում է ջութակը: Եվ այսպես, ստեղծվում է այս հոյակապ երաժշտական կերպարի տպավորիչ «երկպալանությունը»:

Ֆինալը գրված է ռոնդո-սոնատի ձևով, *Allegro con brio*:

Այս մասը ցայտուն, ուրախ երաժշտական պատկերների մի շղթա է: Այստեղ դրսևորվում են Պրոկոֆևիին հատուկ հատակ, որոշակի, գրեթե տեսանելի և շոշափելի երաժշտական կերպարներ, որոնք արագ-արագ կինոկադրի մնան փոխարինում են իրար: Գլխավոր թեման գրված է զավեշտական քայլերգի ձևով: Մեղեդային ֆիգուրների կրկնությունը, առանձին հատվածների մնանեցումը պոպուլյար քայլերգերի ինտոնացիաներին, ստեղծում է փողային նվագախմբի հնչողության տպավորություն:



Հումորով է գրված մաս կապող մասը, իր արհեստական շտապողականությամբ, թմբուկային ոճի մեղեդային նկարագրով, որը շուտասելուկ է հիշեցնում: Օժանդակ թեման (*Poco meno mosso*) հիմնական դեր է կատարում ֆինալի դրամատուրգիայում: Այստեղ ի հայտ է գալիս կոմպոզիտորի ստեղծագործական անսահման երևակայությունը:



Նորից հառնում է երաժշտական կերպարի երկալանային ձևը: Մի կողմից համաչափ շարժումով սողացող մեղեդին, որը սկզբում հնչում է օկտավաներով, հիշեցնելով դաշնամուրային վարժություններ: Այս ֆոնի վրա ի հայտ է գալիս մի նոր թեմա, որը հնչում է ջութակով և հագեցած է մեկիզմներով: Այս երկու միմյանցից տարբեր թեմաներից առաջանում է ինքնատիպ, ուրախ տրամադրություն:

Նշանակալի տեղ է գրավում կենտրոնական էպիզոդը, որն իր քնարական բնույթով տարբերվում է ծայրի մասերից: Մի քանի անգամ կրկնվում է քայլերգային թեման և ի վերջո ամեն ինչ ավարտվում է հանդիսավորությամբ և կենսասիրությամբ:

Այս Սոնատի ջութակի տարբերակը ավելի մեծ տարածում գտավ, քան՝ ֆլեյտայինը: Սոնատի առաջին կատարողը դարձյալ Օյստրախը և Օբորինը եղան 1944-ի հունիսի 17 –ին, Մոսկվայում:

Եվ այսպես, Պրոկոֆևը մեզ ժառանգություն թողեց այս հոյակապ ստեղծագործությունները: Երաժշտության պատմության մեջ նա մտավ որպես XX դարի մեծ կոմպոզիտոր-նորարար: Համաշխարհային ճանաչում գտած նրա ստեղծագործությունները մեծ ազդեցություն են գործել երաժշտական արվեստի հետագա զարգացման վրա:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒՅԹՈՒՆ

1. Шостакович Д., О времени и о себе, М.: Советский композитор, 1980.
2. Сорокер Я., Камерно-инструментальные ансамбли С.Прокофьева, М.: Советский композитор, 1973.
3. Юзефович В., Давид Ойстрах. Беседы с Игорем Ойстрахом, М.: Советский композитор, 1978.

Իսրայելյան Անահիտ Ռաֆայելի

դաշնակահար, Կոմիտասի անվան ԵՊԿ կամերային
անսամբլի ամբիոնի դոցենտ

ԿԼՈՂ ԴԵՔՅՈՒՄԻ ԿԱՄԵՐԱՅԻՆ-ԳՈՐԾԻՔԱՅԻՆ ՍՈՆԱՏՆԵՐԸ՝ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՆՎԱԳԱՑԱՆԿՈՒՄ*

XVII – XVIII դարերում, Եվրոպայում, արվեստը զարգացավ կլասիցիզմի ոճով: Այն հիմնվում էր անտիկ գրականության և արվեստի վրա, ուներ որոշակի սահմանափակումներ թե՛ թեմատիկայի, թե՛ բովանդակության և թե՛ ձևի մեջ: Այս ժամանակահատվածում արվեստը ենթարկվում էր որոշակի և բավականին խիստ կանոնների: Ամենափոքր ազատությունն անգամ արվեստում և գրականության մեջ ենթարկվում էր քննադատության: Արվեստի այսպիսի փիլիսոփայական-մեթոդաբանական հիմքը ռացիոնալիզմն էր: XVIII դարի սկզբներին արդեն կլասիցիզմը սկսեց սպառվել: Այս ոճում թե թեմատիկան, թե արտահայտչամիջոցներն այլևս չէին բավարարում ժամանակաշրջանի պահանջներին:

XVIII դարի երկրորդ կեսին արդեն սկիզբ առավ ռոմանտիզմը, որը հիմնվում էր կլասիցիզմի վրա: Ռոմանտիզմը արվեստում թույլ էր տալիս զգացմունքների ազատ դրսևորումներ: Ի հայտ են գալիս նոր արտահայտչամիջոցներ, որոնք օգնում են ցուցադրել ինչպես ուժը, այնպես էլ զգայական կյանքի նրբերանգները և քնարականությունը: Կոմպոզիտորները որոշակի բարձունքների հասան կերպարների հստակեցման մեջ, որը տեղի ունեցավ լադահարմոնիկ, մվագախմբային լեզվի կատարելության շնորհիվ (Լիստ, Բեռլիոզ, Վագներ): Գործիքային երաժշտության ասպարեզում ռոմանտիկ-կոմպոզիտորները հակված էին հատկապես դեպի դաշնամուրային մանրամվագը: Նրանք գերադասում էին փոքր կտավի պիեսները, որոնք նկարագրում էին որոշակի կերպարներ, և արտահայտում որոշակի տրամադրություն: Ի հայտ եկավ հակվածություն դեպի պարզությունը, և պարային երգային ժանրը: Հավանության արժանացան և մեծ տարածում գտան փոքր կտավի ստեղծագործությունները, նոկլտյուրները, պրեյլյուդներ, վալսեր, մագուրկաներ և այլ ծրագրային պիեսներ:

* Խմբիկ է երաժշտական գրականության հիման վրա ուսումնասիրել Դեբյուսիի կյանքի վերջին տարիներին գրված կամերային-գործիքային սոնատների շարքը:

Որոշ տենդենցներ ի հայտ եկան մեծ կտավի ստեղծագործություններում՝ մի մասանի սոնատներ, կոնցերտներ և այլն: Սրանք իրենց մեջ պարունակում էին սոնատային ձևի ցիկլը, բայց ավելի «ազատ» և հակիրճ ձևով: Լադահարմոնիկ լեզուն ճոխանում է: Ակորդները հագնում են պտերացիաներով և դիստանաներով, որոնք սրում են լարվածությունը և պահանջում հարմոնիկ լուծում: Տարածում գտան դիստոնան ալորդները, ձայնային նոր էֆեկտները, ալորդների և լադերի զանազան հակադրություններ: Ռոմանտիզմը արտահայտում էր առաջադեմ և մարդասիրական տրամադրություններ:

1870-ական թվականներին ռոմանտիզմին փոխարինեց իմպրեսիոնիզմը: Այն իր բուն զարգացումն ունեցավ հատկապես Ֆրանսիայում: Գեղանկարչությունը այս ժամանակաշրջանում վերելք ապրեց: Իմպրեսիոնիստական ուղղության հիմնադիրները դարձան (գեղանկարչության մեջ) Մանեն, Դեգան, Մոնեն, Ռենուարը, Սիսլեյը և ուրիշներ:

Ի տարբերություն կլասիցիզմի, որտեղ ձևը ենթարկվում էր բովանդակությանը, իմպրեսիոնիզմը հարաշարժ իրականության տպավորությունների, ապրումների կապակցված պահերի անմիջական արտացոլում էր:

Իմպրեսիոնիստները բացառում էին ակադեմիզմն ու սալոնայնությունը արվեստում: Նրանք արտացոլում էին իրենց անմիջական տպավորությունները, որոնք բացահայտվում էին լույսի խաղերի հարստության արտացոլումով, տպավորիչ վառ գույներով, օդի առատությամբ, անմիջականությամբ:

Իմպրեսիոնիզմը աստիճանաբար ներթափանցում է կյանքի էության մեջ և բացահայտում շարժման ներքին ուժերը: Սա մի սկզբունքային վերադարձ էր դեպի բնություն, հասարակ մարդու իրական ապրումների և հույզերի, նրան շրջապատող իրականության և իրերի նոր մեկնաբանումը:

Իմպրեսիոնիզմի երաժշտական ճյուղը ձևավորվեց Ֆրանսիայում XIX դարի 80-90-ական թվականներին: Աննախադեպ հարստացավ գունահնչյունային ներկայակերպ, ընդլայնվեց լադային և հարմոնիկ լեզուն: Ի հայտ եկավ ավանդական ձևերի ազատ մեկնաբանությունը: Ստեղծվեց քմահաճ, փոփոխական ռիթմիկա, հայտնվեցին հարմոնիկ նոր հնչողություններ:

Երաժշտության մեջ այս ուղղության հիմնադիրներից է Կ.Դեբյուսին, որի ժառանգությունը այժմ մեծ տեղ է գրավում համաշխարհա-

յին մշակույթի գանձարանում: Նրա գործունեությունը հարուստ էր և բազմաժանր: Հիանալի դաշնակահար, կոմպոզիտոր էր և դիրիժոր: Նրա ծրագրային սիմֆոնիկ ստեղծագործությունները հարուստ են ճոխ հնչերանգներով, վառ արտահայտչամիջոցներով: Դեբյուսին մեծ ազդեցություն է կրել ժամանակի ականավոր գեղանկարիչներից: Դեռևս փոքր տարիքից մա երագում էր նկարիչ դառնալ: Շատ էր սիրում գեղանկարչությունը, գրաֆիկան և հատկապես մանրանկարչությունը: Վերջինիս կնիքը ակնհայտորեն նկատելի է նրա դաշնամուրային մանրանվագներում: Դեբյուսին շատ է գրել պիեսներ և ավելի սակավ՝ մեծ կտավի ստեղծագործություններ: Անկախ ստեղծագործության ծավալից այն ծրագրային է: Հիշենք պիեսների վերնագրերը՝ «Լուսնի լույսը», «Երեկոն Գրենադայում», «Կերպարներ», «Ծովը», «Այգիներն անձրևի տակ», «Խորտակված ամրոցը», «Վանքում» և այլն (2. էջ 27) :

Դեբյուսին սիրահարված էր դաշնամուրին և գտնում էր, որ այդ գործիքի արտահայտչական հնարավորությունները անսահմանափակ են, հնչողությունը՝ հարուստ: Հրաժարվեց նկարիչ դառնալու մտադրությունից և լիովին նվիրվեց երաժշտությանը (1. էջ 46): Դեռևս ուսանողական տարիներից զգացվում էր նրա ձգտումը հարմոնիկ գույների թարմությանը: Այդ իսկ պատճառով նրա հարաբերությունները որոշ չափով լարված էին պրոֆեսոր Էմիլ Դյուրանի հետ, որը հարմոնիա էր դասավանդում Դեբյուսին (2. 36-37): Ժամանակի ընթացքում, իհարկե, Դյուրանը ընդունեց և բարձր գնահատեց իր աշակերտին, որպես ժամանակի լավագույն կոմպոզիտորի: Հետագայում նրանք դարձան անբաժան ընկերներ: Վոկալ ստեղծագործություններում Դեբյուսին աշխատում էր զուգակցել, միավորել երաժշտությունը բանաստեղծության հետ: Նա աշխատում էր մարդկանց պարզևեղ ուրախություն և գեղագիտական մեծ բավականություն: Այդ իսկ պատճառով նորացրել է թարմացրել է երաժշտության (հատկապես նվագախմբային) երանգապանակը, հնչողությունը գունեղացնելու նպատակով օգտագործել է բնական լադեր, պենտատոնիկա, բազմատոնայնական և ատոնալ տարրեր: Երբեմն վերանում է տարբերությունը կայուն և անկայուն ձայների միջև, խախտելով, մինչ այդ ընդունված լադահարմոնիկ համակարգը: Դեբյուսին ստեղծագործության հարմոնիկ լեզվին հատուկ է նաև սեկունդա կվարտային զուգակցումը: Այս բոլորի հետ մեկտեղ նրա ստեղծագործություններում միշտ առկա է մարդկային զգացմունքների կենդանի շունչը:

Ստեղծագործական հասուն շրջանում նրա ռոմանտիկ տրամադրության վերելքին փոխարինեցին մեռկլասիցիստական տենդենցներ: Դեբյուսին ջանում էր արժեքավորել և վերահիմնաստավորել ֆրանսիացի կլավեսինահարների ավանդույթները: Նա մտադրվեց գրել 6 սոնատ գործիքային տարբեր անսամբլների համար: Սա կյանքի այն շրջանում էր, երբ արդեն մեռկլասիցիստական տենդենցները ի հայտ էին եկել նրա ստեղծագործություններում: Դժբախտաբար, կյանքի վերջին տասը տարիները նա պայքարում էր անբուժելի հիվանդության դեմ: Ցավոք, վեց սոնատի մտահղացումը, համընկավ այդ տարիների հետ: Ըստ նրա ծրագրի, դրանցից մեկը պետք է լիներ թավջութակի և դաշնամուրի սոնատ, երկրորդը՝ ֆլեյտայի, ալտի և տավրի սոնատ: Այս ծրագիրը իրականացրեց 1915թ. ամռանը, որից հետո 2 դաշնամուրի համար գրեց ևս 12 էտյուդ «ապիտակով և սևով»:

Թավջութակի և դաշնամուրի Սոնատը ստեղծելիս Դեբյուսին հատուկ ձգտում էր ոճականության: Նա ուզում էր վերականգնել XVII-XVIII դարերի ֆրանսիական սոնատի ձևը, միևնույն ժամանակ երաժշտության մեջ ներառել հնագույն իտալական կոմեդիայի ծրագրայնությունը (1. էջ 697): Դեբյուսին մտադրվել էր այս սոնատը անվանել «Պիերոն, որը կռվել էր լուսնի հետ»: Սակայն հնաոճությանը, ինչպես միշտ, զուգակցում էր սեփական ոճի պահպանումը: Հեղինակն այդ Սոնատի մասին գրել է. «Թող ուրիշները գնահատեն այս սոնատը, բայց ես շատ եմ սիրում նրա համամասնությունները և համաչափությունները, հարաբերություններն ու կառուցվածքը, այն համարյա թե դասական է, այդ բառի լավ իմաստով»: Թավջութակի և դաշնամուրի սոնատը աչքառու է իր կառուցվածքի պարզությամբ և հակիրճությամբ: Այստեղ ռիթմիկ հնարները շատ ճոխ են: Նաև հարմոնիկ և ֆակտուրային հնարները: Թավջութակի նվագաբաժինը հիացնում է ռեգիստրների հակադրությունների բազմազանությամբ և շտրիխների հարստությամբ: Դեբյուսին այս ստեղծագործության մեջ չփայլեց իրեն հատուկ նորարարությամբ, պակասում էր ստեղծագործական քարնությունը: Բայց նա մեծ վարպետությամբ արդիականացրեց հին և զուսպ ժողովրդական և գրիգորիան կերպարների մեղեդիները, տրուվերների երգերը: Նա, ինչ խոսք, պայքարում էր ֆրանսիական ճաշակի և իրեն շրջապատող կյանքի խնդիրների դեմ: Կամա թե ակամա ձևի հանդեպ ունեցած հետաքրքրությունը գերազանցում էր հուզականությանը: Այսպիսով, ստեղծվում էր այնպիսի երաժշտություն, որը թեև ուներ իր ուրույն ոճը, դեմքը, նրբագեղ էր,

սակայն չէր հրապուրում ունկնդրին: Չէ որ այլ կերպ կխախտվեր «ազնվական» դրսևորումը: Եվ երբ ֆինալում հնչում է զգացականտարերային պոռթկումը, միանգամայն հասկանալի է դառնում, որ դա հեղինակի այն «էքստազը» չէ, որը հատուկ էր նրա նախորդ ստեղծագործություններին:

Դեբյուսիի ծրագրած երկրորդ Սոնատը գրված է ֆլեյտայի, ալտի և տավրի համար:

Այս երկը գրելիս կոմպոզիտորին թվացել է, թե ինքը սավառնում է երագում, և վերանում ամբողջ աշխարհից: Այս սոնատը արտակարգ է անսամբլային առումով և հեղինակը նրա համար գտել է չափազանց մեղմ, հոգեհարազատ գույներ: Այստեղ իմպրեսիոնիստական առանձնահատկությունները միաձուլվել են նեոկլասիցիզմի տենդենցներին ստեղծելով անցյալի հղկված հնչողության արձագանք: Այս սոնատի մեջ քիչ չեն նաև մտացածին երևույթները, որտեղ հեղինակը կարծես սեփեթում է գործիքային (երաժշտական) զարդարանքներով և ռիթմիկ ֆիգուրներով: Այսուհանդերձ ֆլեյտայի, ալտի և տավրի Սոնատը իր ամբողջության մեջ շատ ճկուն է և նրբագեղ:

Նախատեսված վեց սոնատներից երրորդը ջութակի և դաշնամուրի Սոնատը Դեբյուսին ավարտեց 1917 թվականի գարնանը: Այն նրա վերջին ստեղծագործությունն է: Արդեն 1916 թ-ի հոկտեմբերին կոմպոզիտորը գրում էր, որ գտել է ֆինալի համար քառյակային կառուցվածքի ձևը, բայց դեռ չգիտի, ինչպես կառուցել սոնատն ամբողջությամբ: Սոնատի առաջին և երկրորդ մասերը կոմպոզիտորը գրեց 1917 թ-ի փետրվարին: Ֆինալի վրա Դեբյուսին շարունակում էր չարչարվել և չէր կողմնորոշվում, թե որն է գերադասելի՝ զգայական կառուցվածքը, թե ոգևորվածության պակասը արժեր լրացնել նորարարությամբ (1. էջ 97):

Սկզբում ֆինալը ձևավորվեց որպես «նեապոլյան», սակայն հեղինակին այստեղ խանգարեցին իրեն համակած հույզն ու անհանգստությունը: Նրան չհաջողվեց գրել նոր ֆինալ և որոշեց վերադառնալ իր հին մտահղացմանը, որոշ չափով այն փոփոխելով: «Մա մեկն է այն հազարավոր փոքրիկ ողբերգություններից, որը աղմկում է վարդի թափվող թերթիկների չափ և այդ աղմուկով չի անհանգստացնում ամբողջ տիեզերքը» (գրում է Դեբյուսին): Նա գտնում է, որ սոնատը լի է մարդկային բնավորության հակասություններով՝ ուրախ բռնկումներով և հույզերով: Մի վստահեք այն ստեղծագործություններին, որոնք կարծես սավառնում են երկնքում - հաճախ նրանք խավարի

մեջ բախվում են մռայլ մտքերի հետ» - գրել է հեղինակը (1. էջ 36-37): Այսպիսին է սոնատի ֆինալը: Այն անցնում է շատ հետաքրքիր ձևափոխումների միջով, որպեսզի ավարտվի մտքի շատ պարզ դրսևորումով, պատվելով ինքն իր շուրջը: Հեղինակի խոստովանություններից ելնելով որոշ մարդիկ այս սոնատում նկատում են, որ Դեբյուսին մտովի արդեն հաշտվել էր իր կյանքի մայրամուտին: Պյուկի սեքսենթումները և ֆանտաստիկ Պիերոյի խաղը երևակայական սիրո հետ, և ի հայտ եկած նեոպոլյան կերպարների առկայությունը - «Մի տրիպտիխ է, որը քամու քմահաճույքին է հանձնված»:

Դեբյուսիի ստեղծագործության ամենավերջին շրջանին հատուկ է անկումային տրամադրությունը, կարծես հունից դուրս եկած, հարկադրական մի վիճակում երաժշտությունը հորինվում է ոչ թե ամբողջ հոգով և սրտով, այլ նրա միայն մի մասով, որը կործանարար ցնցումներից հետո կարծես դեռ ողջ է մնացել: Դժբախտաբար, այս բոլոր հատկանիշները առկա են ջութակի Սոնատում: Այստեղ կարծես թե հենարանի պակաս է զգացվում և ինչ-որ մի շատ կարևոր բան է պակասում, շատ հիմնական:

Հարկ է նշել, որ այս ամենի հետ մեկտեղ Դեբյուսին այս ստեղծագործության որոշ հատվածներում հասել է նշանակալի պարզության և համոզիչ դրվագների:

Սոնատի առաջին մասը (g-moll) գրված է Allegro vivo $\text{♩.}=55, 3/4$: Այս մասը գրավում է իր պատմողական, որոշ չափով տխուր բնույթով: Այն որոշ հատվածներում, զուրկ չէ նաև աշխուժությունից:

Առաջին թեման լայտմոտիվի նման կրկնվում է նաև ֆինալում: Այն մեղմ է, հանդարտ, գուցե և մի քիչ տխուր: Պետք է նշել, որ այստեղ զգացվում է Ֆրանկի երազող, բանաստեղծական շունչը:



Մաժոր-մինորային եռահնչյունների այս խաղի մեջ զգացվում է նախկին Դեբյուսին: Այնուհետև մեզ գրավում է վարպետորեն զարգացող թեման, որտեղ լսվում են կրքոտ բռնկումներ: Նրանք ուղեկցվում են վարքնթաց տխուր հոգոցներով:



Այնուհետև ութերորդական սեկվենցիաներով աշխույժ առաջընթաց է տեղի ունենում, որը տրամաբանորեն հասնում է *appassionato*-ին:



Երկրորդ թեմայում կոնտրաստները հիմնված են տեղեկանքի վրա՝ Մի մածոր և Դո մածոր: Սա մի փոքր ավելի մտացածին է և նրանում չորություն կա: Առաջին թեմայի ռեպրիզայում վերականգնվում է և նույնիսկ ավելի ընդգծվում երաժշտության ճկունությունը, կոլորիտի թարմությունը:

Կողայում, որը բավական համարձակ են մածոր սուրբոմիանտները, դորիական շրջվածքները հնչում են ուժեղ և առնական:

Սոնատի երկրորդ մասը (իմտերմեդիա, *Fantastique et léger* ♩=75, 2/4) կարծես եզրակափակում է կատակային, սկերցոգ կերպարների շարքը: Այս մասը հետաքրքիր է իր կառուցվածքով և ռիթմիկ առանձնահատկություններով, հարմոնիկ հնարներով (օր՝. միաժամանակ զուգակցվում է մվագակցող օստինատոյին ֆիգուրացիաները Ռե բեմոլ մածորում և Դո մածորում): Այս մասում թեման բավական հեղինդուկ է և պրետենցիոզ:



Սոնատի երրորդ մասում (ֆինալ, *Tress anime* ♩=55, 3/8 g-dur) գերիշխում է թվացյալ ուրախություն, որը ստիպում է արհեստականորեն հեռանալ կյանքի դառնություններից և տանջանքներից: Հեղինա-

կը գրել է. «Այս մասում հույզերի արտահայտությունը որոշ չափով արհեստական է, սարքովի: Կերպարների բացահայտումը դրսևորվում է մեխանիկական շարժումների միջոցով» (1. էջ 679-680):

Ինչպես վերը նշվեց, այս մասում հնչում է առաջին մասի առաջին քննաման:



Սոնատը սկսվում է շատ անմիջական, բայց ավարտվում է ինքնամփոփ: Այս քայլով կարծեք թե մանրանվագային ձևով ներկայացվում է կոմպոզիտորի կյանքի անցած ամբողջ ուղին: Այն սկզբնական շրջանում բեղուն էր, ազատ, լայնարձակ, լի անկաշկանդ զգացմունքներով և գույներով, իսկ վերջում փնտրում էր փրկարար ելքեր, որոնք կարծեք թե իրեն պետք է օգնեին ազատվելու հրեշավոր իրադարձությունների հարվածներից և կյանքի զանազան հիասթափություններից:

1917թ-ի մայիսի 5-ին, Դեբյուսին, ջութակահար Գաստոն Պուլեի հետ կատարեց իր վերջին ստեղծագործությունը՝ ջութակի և դաշնամուրի Սոնատը:

Ժամանակակիցները գրում են, որ այդ համերգում լսած երաժշտությունը մի կախարդանք էր, աստվածային, անկշռելի, արտակարգ երանգներով և գույներով, որի նմանը իրենք երբեք չէին լսել: Դեբյուսին ստեղծում էր այնպիսի հնչողություն, որը պարզապես պոեզիա էր:

Դժբախտաբար, այս համերգը կոմպոզիտորի վերջին ելույթն էր: Այն փաստորեն հրաժեշտ էր փարիզի երաժշտասեր հասարակության հետ: Անբուժելի հիվանդ Դեբյուսին և 1918 թվականի մարտի 25-ին մահացավ:

Այսպիսով, մենք ծանոթացանք Դեբյուսինի կամերային գործիքային սոնատների այս շարքի որոշ յուրահատկությունների հետ:

Այժմ, մի փոքր անդրադարձ կատարողական այն նրբություններին, առանց որոնց կատարողը չի հասնի իր առջև դրված խնդիրների լուծմանը:

Ինչպես հայտնի է, յուրաքանչյուր ստեղծագործություն՝ կլասիցիզմի, ռոմանտիզմի, ավանգարդիզմի և այլ ոճի ու դարաշրջանի երկ, պահանջում է մի շարք կատարողական կանոններ: Իմպրեսիոնիզմը

բացառություն չի կազմում: Այս ոճում կատարելության հասնելու գերխնդիրն է ձայնի որակին տիրապետելը: Նույնքան կարևոր է բացահայտել երաժշտության բովանդակությունը (1. էջ 694-697): Շատ հաճախ Դեբյուսիի ստեղծագործություններում փնտրում ենք բնականաբան և պատմողական բնույթի պոեզիա, այնինչ այնտեղ զարմանալիորեն գուգակցվում են հումորը և լրջությունը: Հարց է ծագում, թե ինչպե՞ս կարելի է ունկնդրի գիտակցությանը հասցնել յուրահատուկ և նուրբ միտքը: Հեղինակի նման ոչ ոք չէր կարողանում մեկնաբանել և կատարել այս ստեղծագործությունները: Նրա կատարումը նման էր հրաշքի: Այդ կատարումը ունկնդրին ներգրավում էր իր հուզաշխարհով: Որտեղ է թաքնված կատարելության գաղտնիքը: Այս երաժշտությունը լավ կատարելու համար անհրաժեշտ է նախ ուսումնասիրել կոմպոզիտորի ոճը: Այստեղ շատ կարևոր է մատների, ստեղների և հավելյալ փափկությունը, ճկունությունը և ձայնի խորությունը: Այն պետք է սահի ստեղների վրայով շատ նրբագեղ, միևնույն ժամանակ ստեղներին տիրապետի վստահ, ամուր և կարողանա նվագել արտակարգ էքսպրեսիվ հզորության ակորդներ: Այստեղ է թաքնված գաղտնիքը, նրա երաժշտության հանելուկը: Տեխնիկական դժվարությունների առանձնահատկությունը կայանում է նրանում, որ նրբությունը գուգակցվում է զարգացող լարվածության հետ: Այսպես է ծնվում նրա գույների հարստությունը (2. էջ 40-41): Շատ մեծ ուշադրություն է դարձնում Դեբյուսին պեղալիզացիայի վրա: Նա գտնում էր, որ պեղալիզացիան ստեղծագործության շնչառությունն է: Այս երաժշտության բանալիներից մեկն էլ այն է, որ կատարողը պետք է գտնվի հիացական վիճակում, ամբողջովին լինի նրա ազդեցության տակ և իր ներքին համոզումը ազնվորեն մատուցի ունկնդրին: Եթե խորապես ներթափանցենք նրա երաժշտական մտքի մեջ կհամոզվենք, որ այն տեխնիկապես հաղթահարելու համար անհրաժեշտ է (2. էջ 40-41).

1) որ մատների հայումը ստեղնաշարին լինի ոչ միայն շարունակական, այլև խորը, կարծես հատուկ ձևով պետք է լրիվ միաձուլվի ստեղնաշարի հետ,

2) մատները պետք է հպվեն ստեղների երգող, հնչող արմատների հատակին:

Կատարյալ legato-ի համար դաշնակահարը ստեղներին հպվելիս պետք է ձայնը զգա իր մատների ծայրերի մեջ և աշխատի պահպանել ուժի փափկության և փափկությունը ուժի մեջ:

Ինչպես վերը նշվեց, Դեբյուսին հոգ էր տանում պեղալի մա-

սին:Նա պահանջում էր վարպետորեն օգտագործել այն, շատ հաճախ առաջարկելով աջ և ձախ պեղալները սեղմել զուգահեռաբար:

Ինչպես իմպրեսիոնիստների կտավներում, կոլորիտը զգացվում է քիչ հեռվից, այնպես էլ Դերյուսիի ստեղծագործություններում պեղալի դերի կոլորիտը ստեղծում է արծաթյա, զրնգուն հնչողություն: Միայն թե պեղալիզացիայի հարցում պետք է լինել համարձակ, տիրապետել պեղալը սեղմելու տարբեր խորություններին: Այլապես, առանց այս վարպետության դաշնամուրի ձայնը կխեղճանա: Շատ հաճախ պեղալի սովորական նշումը փոխարինվում է լիզայով, որը անցնում է մի ակորդից դեպի հաջորդ ակորդը: Թեթև հպումը պեղալին staccato-ի ժամանակ նույնպես Դերյուսիի սիրելի հնարներից էր: Լայն կիրառություն է գտել պեղալի կիսատ սեղմումը (կիսապեղալ): Պեղալիզացիայի շնորհիվ հարստանում է գունային գամման և ինչպես Դերյուսին ինքն էր ասում.

«Թույլ տվեք, որ գործիքը խոսի»:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒՅԹՈՒՆ

1. Кремлев Ю., Клод Дебюсси, М.:Музыка, 1965.
2. Маргарит Лонг, За роялем с Дебюсси, М.: Советский композитор, 1985.

Իսպիրյան Հասմիկ Մերուժանի

Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի գործիքային ամբիոնի դոցենտ

ԴԱՇՆԱՍՈՒՐԱՅԻՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ ԽՆԴԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՈՐՈՇ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ԵՎ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ

Դաշնակահարի տեխնիկան ձևավորվում է աստիճանաբար, տարիների ընթացքում, ընդհանուր երաժշտական զարգացմանը զուգընթաց: Կատարողական արվեստում, «...տեխնիկական խնդիրները ճիշտ այնքան են, ինչքան դաշնամուրային երաժշտությունն է» (5, էջ 101): Արդի մեթոդաբանության գրականության մեջ բազմիցս բարձրացվել և քննարկվել են սովորողի դաշնամուրային տեխնիկայի ձևավորման խնդրին վերաբերող բազմապիսի հարցեր: Մեծանուն դաշնակահար-տեսաբանները, ինչպես աշխատություններում, այնպես էլ առանձին հոդվածներում ներկայացրել են այս խնդրի լուծման իրենց պատկերացումները: Կարելի է ասել, երկարամյա, բուռն քննարկումների արդյունքում ձևավորվել են տեխնիկայի վերաբերյալ ժամանակակից տեսակետները:

Թվում է, թե խնդիրը ավելի քան լուծված է: Սակայն, այսօր էլ ինչպես միջնակարգ մասնագիտական հաստատություն, ինչպես նաև բուհ ընդունված ուսանողների զգալի մասի մոտ այս կամ այն չափով առկա են տեխնիկական ոլորտում տեղ գտած թերությունները, որոնք արգելակում են երաժշտական պատկերավոր մտածողության զարգացումը, սահմանափակում ինքնաարտահայտման հնարավորությունները: Այդ ուսանողների հետ աշխատելիս պարզվում է, որ նրանք «սխալ»՝ ոչ ճիշտ պատկերացում ունեն դաշնամուրային տեխնիկային առնչվող որոշ հասկացությունների վերաբերյալ, որոնք ձևավորվել և ամրացել են գիտակցության մեջ ուսումնառության սկզբնական շրջանում:

Ճիշտ **պատկերացումների** ձևավորումը պայմանավորված է գրագետ կազմավորված **հասկացությունների և ճիշտ զգացողությունների** առկայությամբ: Եթե հասկացությունը կարելի է բացատրել բանավոր խոսքով, ապա ճիշտ և առողջ զգացողությունը ձեռք է բերվում բացառապես փորձի միջոցով: Ուսուցչի խնդիրն է կատարելիք գործողության իմաստը և կերպը (վարժության տեսակը և կատարման նպատակը) բացատրելուց՝ հետո այնպես ուղղորդել գործընթացը, որպեսզի սովորողը փորձառությամբ հասնի սովյալ պարագայում անհրաժեշտ զգացողությանը:

Ինչպես ցանկացած ֆիզիկական գործողության, այնպես էլ դաշնամուր նվագելու համար, անհրաժեշտ շարժումների կազմավորումը պայմանավորված է մկանային համակարգի կառավարելի, ազատ, ներդաշնակ գործելակերպով: Ավելացնենք նաև, որ կատարողական շարժումների կազմակերպումը ինքնանպատակ չէ: Համեմատելով բալետի արտիստի և դաշնակահարի շարժումները, կարելի է ասել, որ առաջին դեպքում գեղեցիկ, հստակ և արտահայտիչ շարժումներ ձևավորելը նպատակ է, քանի որ պարողի ինքնաարտահայտման միջոցը շարժումներն են և դրանց թողած տպավորությունը: Դաշնակահարի նպատակը համապատասխան հնչյունային պատկեր ստանալն է, իսկ ձեռքերի շարժումները՝ այն իրագործելու միջոց: Կատարողական շարժումները արտաքին դրսևորմամբ պարզ են, սակայն ստացվող հնչյունների երանգավորումը, ուժգնությունը և որակական բազում այլ ցուցանիշներ բազմազան են և բազմապիսի: Հնչողության բազմազանությունը ստացվում է մկանային համակարգի անտեսանելի և բարդ գործողությունների արդյունքում: Բարդությունն այն է, որ այդ գործողությունները կազմակերպվում են ներքին, սուբյեկտիվ զգացողություններով, ուղղորդվում լսողական պատկերացումներով: Կարելի է ասել, որ կատարողական շարժումների սկզբնաղբյուրը համապատասխան զգացողություններն ու դրանց վերաբերյալ ճիշտ պատկերացումներն են: Այս առումով հանրահայտ գերմանացի մանկավարժ Վ.Բարդասը գրում է. «Քանի դեռ պարզ չէ այն մկանային զգացողությունը, որը պետք է կապված լինի շարժման որոշակի ձևի հետ, միշտ առկա է այն վտանգը, որ շարժման ձևը լինի լոկ արտաքին նմանակում, իսկ մկանային գործունեության զարգացման առումով ոչ մի օգտակար բան տեղի չունենա ...» (3. էջ 28):

Ուսման սկզբում, առաջին իսկ վարժություններով սկզբնավորվում է դաշնակահարին անհրաժեշտ **ազատ ձեռք, ձեռքի ամբողջականություն, «շնչող» ձեռք, ձեռքի հենարան** հասկացությունների մասին պատկերացումների և դրանց հետ կապված զգացողությունների ձևավորման գործընթացը: Վերոնշյալ հասկացությունները փոխկապակցված են. դրանցից յուրաքանչյուրի վերաբերյալ ոչ ճիշտ պատկերացումը կխաթարի տեխնիկական ապարատի բնականոն զարգացումը: Այս շրջանում ձևավորված պատկերացումները, դրանց հետ կապված գործողությունները, որպես կանոն, խոր զգացմունքային հետք են թողնում երեխայի վրա, հետագայում, անցնելով ենթագիտակցության ոլորտ, պահպանվում որպես անփոփոխ ճշմարտություններ: Ուսուցչի հեղինակությունը թույլ չի տալիս կասկածել դրանց: Հետևաբար, որքան հստակ են ուսուցչի պատկերացումները վերոնշյալ հասկացությունների վերաբերյալ, այնքան հստակ պատ-

կերացումներ են ձևավորվում սկսնակի մոտ և դյուրին է ընթանում կատարողական ճիշտ շարժումների կազմավորումը:

Դիտարկենք, թե սկսնակի հետ աշխատելիս ինչպես և ինչ նպատակով են կատարվում արդի մանկավարժության մեջ ընդունված, ամբողջ ձեռքով մեկ հնչյուն արտաբերելու վարժությունները, թե ինչպես է այն կանխորոշում վերը նշված պատկերացումների կազմավորումը: Ըստ էության, սկզբնական վարժությունների նպատակն է կապ հաստատել լսողական և շարժողական ոլորտների միջև, համապատասխան մկանային զգացողություններով կազմակերպել շարժումները, ստանալ արտահայտիչ, երաժշտական հնչողություն: Խնդիրն այն է, որ որոշ դեպքերում վարժությունները կատարվում են մեխանիկորեն. ոչ միշտ է ուսուցիչը բացահայտում կատարման ներքին մեխանիզմները, հստակ պատկերացնում **ինչու** և **ինչպես** է դրանք անհրաժեշտ կատարել:

Մասնավորապես, ազատ ձեռքի մասին ուսուցչի թյուր պատկերացումը, «ձեռքը թուլացնելու» պահանջը, ամեն կերպ այն պասիվ, «մտրակի նման» կախված, թուլացված վիճակի բերելու ձգտումը, այսինքն մկանային համակարգի **բացարձակ թուլացումը** հանգեցնում է ամբողջ գործընթացի ոչ ճիշտ կազմակերպմանը ի սկզբանե, արդեն դաշնամուր նվագելու համար ոչ պիտանի մկանային զգացողությունների, հետևաբար, ազատ ձեռքի մասին ոչ ճիշտ պատկերացումների: Սովորողի գիտակցության մեջ տեղի է ունենում, «ազատ ձեռք» հասկացության փոխակերպում տվյալ պարագայի համար շինծու, «թուլացված ձեռք» հասկացության և նա իր բոլոր գործողությունները փորձում է կազմակերպել համաձայն այդ պատկերացման: Ուսման սկզբնական տարիներին սերմանված հասկացության նման ընկալումը հետագայում ակնհայտորեն դրսևորվում է ոչ ճիշտ կազմակերպված կատարողական շարժումներում:

Հաճախ կարելի է նկատել, թե ինչպես է ուսանողը ջանում (համաձայն իր պատկերացումների) որոշակի շարժումների միջոցով ազատվել նվագելու ընթացքում առաջացած լարվածությունից: Օրինակ, կառուցվածքի ներսում չկապակցված հնչյուններ նվագելիս, տեխնիկական բարդություն ներկայացնող շարադրանքի կատարումն սկսելիս, մեղեդային մեկ կառույցից մյուսին անցնելիս (լիզայի վերջում) և այլն, ամբողջ ձեռքը բարձրացնում է վեր, մկանային համակարգը բերում թուլացված վիճակի և այս վիճակով դաստակի և մատների թուլացված դիրքով, գցում ստեղին: Մենք ասում ենք «գցում», որովհետև ձեռքի վերը նշված վիճակը շարժումները դարձնում է անկառավարելի, համապատասխան զգացողությամբ որակյալ հնչյուն ստանալու ակնկալիքը չի արդարացվում: Սկանների թու-

լացված անբնական վիճակում գործիքին հարմարվելու, ձեռքը աշխատանքային վիճակի բերելու, որևէ շարժում կատարելու համար լրացուցիչ ճիգեր են պահանջվում: Ազատ և անկաշկանդ գործելակերպի փոխարեն ձեռքի տարբեր հատվածներում առաջանում են շարժումները արգելակող լարումներ: Մեկ այլ տարածված տարբերակ շարադրանքի հենման կետերում ձեռքի դեպի դուրս և վեր պտտող շարժումով փորձում են գտնել հենարանի զգացողությունը և այսպես ազատել ձեռքը: Սակայն, եթե չկա ձեռքի ազատության և հենարանի վերաբերյալ իրական պատկերացում, երկու դեպքում էլ, որպես կանոն, կատարվող շարժումները ոչ մի դրական արդյունք չեն տալիս. ոչ մի մկանային նոր զգացողություն, որն օգտակար կլիներ հետագա շարժումները կազմակերպելու համար, չի առաջանում: Պահպանվում է սովորություն դարձած, առանց հենարանի, «օդում» գտնվող ձեռքի, թույլ և անկառավարելի գատված մատների վիճակը: Շատ դեպքերում ուսանողը չի էլ ենթադրում, որ իր անկարողությունը ձեռքի ազատության վերաբերյալ ձևավորված ի սկզբանե ոչ ճիշտ պատկերացումների, համապատասխանաբար ոչ ճիշտ զգացողությունների արդյունք է, և ոչ մի ֆիզիկական գործողություն ինքնին չի կարող **հանգեցնել ազատության իրական զգացողության**: Ավելացնենք, որ հաճախ և ոչ տեղին կտրուկ վեր ու վար, կամ լայնաթափ պտուտակաձև շարժումները խանգարում են երաժշտական մտքի ընկալմանը, խաթարում կատարվելիք նյութին համապատասխան մպատակահարմար կատարողական շարժումների կայացումը:

Հստակ պատկերացումով աշխատելիս, ինչպես գրում է հանրահայտ տեսաբան-մանկավարժ Ա.Ալեքսեևը, այս սկզբնական non legato եղանակով վարժությունները, «...առաջին իսկ քայլերից դաստիարակում են ձեռքի բոլոր մասերի կոորդինացում, հնարավորություն են տալիս հետամուտ լինել մկանների **համապատասխան աստիճանի** ազատմանը...» (1. էջ 152): Ինչպես տեսնում ենք, ոչ մի ակնարկ չկա ամբողջ մկանային համակարգի բացարձակ թուլացման վերաբերյալ: Ինչպես ավելորդ լարումները, այնպես էլ չափից ավելի թուլացումները խանգարում են համապատասխան գործողության համար անհրաժեշտ մկանային զգացողությունների կայացմանը: Դաշնակահարի աշխատող ձեռքը պահանջում է մկանային ուժ գործադրելու անհրաժեշտություն: Իսկ ինչպե՞ս կարելի է համադրել այս անհրաժեշտությունը մկանների բացարձակ թուլացված վիճակի հետ: Երբ ձեռքը թուլացնելու պահանջն ուղղված է մկանների լարվածության աստիճանի նվազեցմանը, կամ ձեռքի որևէ հատվածում առկա՝ **ավելորդ, խանգարող** լարվածության վերացմանը, այլ կերպ, ուսուցչի դիտողությունները ոչ թե ընդհանուր բնույթի են, այլ

ունեն հստակ ուղղվածություն՝ սովորողի համար կատարվելիք գործողության բնույթն ու իմաստը դառնում է պարզ, համապատասխան զգացողությունների ձևավորման խնդիրը դյուրին: Այս առումով ուշագրավ է 20-րդ դարի դաշնամուրային կատարողական արվեստի մեծանուն տեսաբան Է. Բախի այն միտքը, թե «...այն դաշնակահարը, որը չի ուսումնասիրել ճիշտ նվագելու համար անհրաժեշտ շարժումները ...մշտապես կհանդիպի չենթարկվող, թուլացված կատարողական ապարատի դիմադրությանը» (4. էջ 42): «Ազատ ձեռք» նշանակում է շարժումները արգելակող, մկանների սեղմված, ճնշված, այսինքն ավելորդ լարումներից զերծ վիճակ:

«Ազատ ձեռք» հասկացությունը ճիշտ պատկերացնելու կարևորագույն պայմաններից է **հենարանի զգացողության** դաստիարակումը: Հենարանի զգացողությունն առաջանում է, երբ ձեռքի ծանրությունն ուղղվում է մատի ծայրերի՝ «բարձիկների» միջոցով փոխանցվում է ստեղներին: Մինչև վերջ իջեցնելով ստեղնը, մատը իր վրա է վերցնում և պահում ձեռքի ծանրությունը: Ձեռքը, մատներին հենվելով, անկաշկանդ գործելու հնարավորություն է ստանում: Խնդիր է, թե ինչպե՞ս ստանալ այդ զգացողությունը: Սովորաբար վարժությունը կատարելիս երեխային չեն գրավում մկանային զգացողությունները. դրանք առավելապես կենտրոնանում են կատարվող շարժումների վրա: Անհրաժեշտ է զերծ մնալ չափազանցված, երեխայի բնությանը հակառակ, նվագելու համար ոչ պիտանի, արհեստականորեն կազմավորված շարժումներից. հենարանի զգացողության հասնելու համար շարժումները պետք է լինեն հանդարտ, սահուն, ոչ կտրուկ:

Հենարանի իրական զգացողությունը կապված է **կանգուն մատների** զգացողության հետ: Երեխայի համար ստեղծվում է նոր, անծանոթ գործողություն կատարելու, բնականաբար, նոր զգացողություն ձեռք բերելու խնդիր. անհրաժեշտ է, որ մատը ամբողջապես, առանց մատնահողերում ծավելելու, բարձիկով հենվի ստեղնին՝ իր վրա վերցնելով ստեղնին ուղղված ծանրությունը: Այն պահանջում է մատնահողերը միացնող մկանների կազմակերպում՝ մատների ամուր, ակտիվ, կայուն վիճակ: Խնդիրը բարդ է այնքանով, որ մատների համար դեռևս անսովոր՝ ծանրություն պահելը հարկադրում է ակտիվացնել և շարժման մեջ դնել լրացուցիչ, մինչ այդ պասիվ վիճակում գտնվող մկանները: Մինչև ստեղններով վարժություն կատարելը, մատի մկանները ակտիվացնելու, մատներում կառչունության զգացողություն ստանալու համար, կարելի է կատարել նախալարժանքներ*:

* Բազում նախալարժանքների օրինակներ կարելի է գտնել А.П.Мид-Шкловская “О воспитании пианистических навыков” М.,Классика-21, 2003, մեթոդական ձեռնարկում:

Իրենց վրա վերցնելով ձեռքի ծանրությունը, նույնիսկ բնությունից թույլ մատները աստիճանաբար ամրանում են: Աշխատանքի ճիշտ կազմակերպման դեպքում հենարանի զգացողության ձևավորումը բարդ է այնքանով, որքանով բարդ է ցանկացած նոր, անծանոթ գործողության յուրացում: Աշակերտի՝ բնականից թույլ մատների վերաբերյալ ուսուցիչների բողոքը կարելի է անհիմն համարել, քանի որ այդ վիճակը սովորաբար դաշնամուր նվագելու հիմնական զգացողության՝ հենարանի բացակայության, մատները առանց ծանրաբեռնվածության թողնելու արդյունք է: Երբեմն ուսուցիչների ուղղորդումը դեպի «փափուկ» ձեռք, «փափուկ» շարժում, «փափուկ» հնչողություն փոխադարձ կապի ընկալումը փոխակերպվում և ընկալվում է որպես «փափուկ մատ», «փափուկ» հնչողություն, որն անընդունելի է: Նույնիսկ ամենամրբին երանգավորում ստանալու համար անհրաժեշտ են ամուր, ակտիվ մատներ: «Ակտիվ» բառը այստեղ վերաբերում է ոչ թե մատների արտաքին շարժումներին, այլ՝ մկանային ներքին զգացողությանը, մկանային տոնուսին: Կան ճշմարտություններ, որոնք արժե մշտապես կրկնել. դաշնակահարի կատարողական ապարատը պահանջում է ամուր, ակտիվ, ճկուն (սակայն ոչ ճկվող) մատներ:

Ազատ հենված ձեռքի զգացողությունը ներքին, սուբյեկտիվ զգացողություն է: Եթե ուսուցչին չի հաջողվում աշակերտի արտաքինապես շտկված շարժումներում զգալ հենարանի բացակայությունը և վերացնել թաքնված լարումները, ապա այդ ձևով նվագելը աշակերտի համար դառնում է սովորություն: Նրա մոտ ձևավորվում է **կեղծ պատկերացում հենարանի մասին** և հետագա ամբողջ գործելակերպը ընթանում է բարդությունների և զանազան խնդիրների միջով. համընթաց տեխնիկական զարգացումը խաթարվում է:

Ժամանակակից մեթոդական գրականության մեջ սկզբնական կատարողական շարժումներին վերաբերող զանազան բացատրություններում կարևորվում է **ձեռքի ամբողջականության** (միասնականության) զգացողության խնդիրը: Եվս մեկ անգամ կրկնենք այն միտքը, որ առանց հասկացության գրագետ ընկալման անհնար է ձևավորել համապատասխան մկանային զգացողություն, արդյունքում՝ ճիշտ պատկերացում: Պարզաբանենք: Քիչ չեն այն դեպքերը, երբ ուսուցիչները, հստակ պատկերացում չունենալով վերը նշված հասկացության մասին, նույնացնում են այն «ամբողջ ձեռքով ստեղծելիքները» հասկացության հետ: **Ամողջականության զգացողությունը՝ մկանային զգացողություն է:** Երբ non legato վարժություն կատարելիս ուսուցիչը պահանջում է ամբողջ ձեռքը իջեցնել ստեղծին, սակայն անտեսում է ձեռքի ամբողջականության զգացողության խնդիրը

(այդ են վկայում մկանային համակարգը բացարձակ թուլացված վիճակի բերելու ջանքերը), ապա գործիքին հարմարվելը, համապատասխան զգացողություններով նպատակահարմար շարժումներ ձևավորելը աշակերտի համար դառնում է գերխնդիր:

Ամբողջականության զգացողությունը պահանջում է՝ հնչյունաարտաբերման, այսինքն ստեղնին հավելելու պահին բոլոր հոդերը ամրակցված լինեն այնպես, որ ձեռքի առանձին մասերի (բազկի, դաստակի, մատների) ոչ մի զատվածության զգացողություն չլինի: Ամրակցումը կայանում է մկանների «ազատ սկեռումով» (Է.Բախ) ինչը նշանակում է մկանային համակարգում այնպիսի կորովի, այսինքն այն աստիճան մկանային լարման առկայություն, որի դեպքում պահպանվում է մկանների ճկունությունը, և ձեռքը պատրաստ է անկաշկանդ կատարելու ցանկացած գործողություն: Ազատ սկեռումներն ստեղծում են ամբողջացված, փոխկապակցված, ճկուն և շարժուն մկանային համակարգ: Ձեռքի բոլոր օղակները միասնաբար (ակտիվ կամ պասիվ) մասնակցում են հնչյունաարտաբերման գործընթացին: Հնարավոր է դառնում ճկուն կերպով փոփոխել (ավելացնել կամ պակասեցնել) ստեղնին հաղորդվող ձեռքի կշիռը և այն կազմավորող մկանային հանգույցների ակտիվության տարբեր հարաբերակցությունը, հետևաբար փորձի միջոցով (բնականաբար ուսուցչի օգնությամբ) հարմարվել, հնչյունի որակի ներքին պատկերացումների համաձայն (երգային, գեղեցիկ, լիաթոք և այլն) գտնել համապատասխան մկանային զգացողություններ: Ձեռքի ամբողջականության մասին ճիշտ պատկերացումը կբացառի հոդերը միացնող մկանների թուլացված վիճակով անարդյունավետ գործելակերպը: Ավելացնենք, որ մինչև ստեղնից ձեռքը վերցնելը ձեռքին որոշակի ձև տալը նույնպես նպատակահարմար չէ, քանի որ այն առաջացնում է մկանների աշխատանքը կաշկանդող ձգվածություն:

Հենարանի ու ձեռքի ամբողջականության զգացողությունները միասնաբար տալիս են անկաշկանդ, սահուն շարժվող, **«շնչող» ձեռքի զգացողություն:** Ձեռքի շունչը և հենարանի զգացողությունը ստուգելու համար, ընդունված է ստեղնը իջեցնելուց հետո կատարել ձեռքի վեր ու վար, կամ պտուտակաձև շարժումներ: Սակայն, քանի դեռ չի ձևավորվել ճիշտ պատկերացում ակնկալվող զգացողության վերաբերյալ, սահուն շաժումները կարող են լինել խաբուսիկ և նույնիսկ՝ խանգարող: Ինչպե՞ս: Սկզբնական շրջանում աշակերտը դեռևս հստակ պատկերացում չունի հենարանի իրական զգացողության մա-

սին. և՛ շարժումները և՛ զգացողությունները գտնվում են կազմավորման փուլում: Կարող է ստացվել այնպես, որ ուսուցչի օգնությամբ կատարվող վերը նշված ստուգող շարժումները լինեն սահուն, ենթարկվող, սակայն դեպի վեր շարժում կատարելիս, վերանա հենարանի զգացողությունը, իսկ դրան հաջորդող՝ դեպի վար շարժումով այն չվերականգնվի: Թեև ձեռքը ակնհայտորեն սահուն շարժումներ է կատարում (չէ՞ որ ձեռքը հաջողությամբ կարող է կատարել զանազան սահուն շարժումներ առանց ստեղծելիս հենվելու), սակայն, կորցնելով հենարանը, կորցնում է նաև մատների վստահ գործելակերպին անհրաժեշտ, համապատասխան կերպով ամբողջ մկանային համակարգը կազմակերպելու, բնական շարժումներ կազմավորելու հնարավորությունը: Ձեռքի տարբեր մասերում՝ ավելի հաճախ ուսագոտում, առաջանում են աչքի համար անտեսանելի, թաքնված լարումներ: Կարևորագույն շոշափելիքի զգայարանները՝ մատների ծայրերը, կորցնում են իրենց ակտիվությունը՝ ստեղծելով ամուր հպվելու զգացողությունը: Այսպիսով, վարժությունից սպասվող արդյունքը՝ ստեղնաշարի հետ կապ ստեղծելը, չի հաջողվում, թեև մատը թեթևակի հպումով շարունակում է պահել ստեղծը (ստեղծը իջեցված պահելու համար մեծ ուժ չի պահանջվում)՝ կորցնելով ծանրություն պահելու անհրաժեշտությունը, դառնում է թույլ և պասիվ: Հետագայում՝ առավել բարդ, կապակցված եղանակով նվազելիս, երբ անհրաժեշտ է հենարանը փոխանցել մի մատի ծայրից մյուսին՝ ձեռքի օգնությունից զրկված մատները գործում են անվստահ, արտաբերում անհրապույր, անհավասար հնչյուններ:

Ամբողջականության և հենարանի զգացողության համար շատ կարևոր է դաստակում ակտիվ աշխատանքային կորովի առկայությունը (ոչ մի գերլարում, ոչ մի չափից ավելի թուլացում): Թուլացած, ձեռքի ամբողջականությունը խաթարող դաստակի աննպատակ, պտտող շարժումները (որոնք սխալմամբ երբեմն ընկալվում են որպես ազատության դրսևորում), նույնպես կարող են հեռացնել հենարանի զգացողությունից: Ամբողջություն կազմելով բազկի հետ՝ դաստակը պետք է շարժումները փափկացնող «զսպանակի» դեր կատարի, ենթարկվի և ճկուն կերպով արձագանքի ամբողջական ձեռքով կատարվող բոլոր շարժումներին: Մատների և ամբողջ ձեռքի աշխատանքի փոխադարձ կապը՝ կոորդինացումը, իրագործվում է դաստակի միջոցով:

Վերը նշված զգացողությունները փոխկապակցված են: Ճիշտ

պատկերացումներով նրանց միասնաբար ձևավորումը կբացառի թուլացված ձեռքով նվագելու տարրերակը. առավելագույնս կնվազի, լավագույն դեպքում նաև կբացառվի ոչ պիտանի, կեղծ շարժումների կազմավորումը: Առողջ հիմքերի վրա կդրվի շարժողական ոլորտի բնականոն զարգացումը: Այս հարցում սովորողի հաջողությունները մեծապես կախված են դրանց վերաբերյալ ուսուցչի հստակ պատկերացումներից և գործնական աշխատանքից:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒՅԹՈՒՆ

1. Алексеев А., Методика обучения игре на фортепиано. М.: Музыка, 1971.
2. Баренбойм Л., За полвека. Очерки, статьи, материалы. Л.: Советский композитор, 1989.
3. Бардас В., Психология игры на фортепиано, цит. по: Апоян Ш., Золотова И., Из истории фортепианной педагогики и исполнительского искусства XX века., Ер.: Комитас, 1998.
4. Бах. Э., Рациональная фортепианная техника, цит. по: Апоян Ш., Золотова И., Из истории фортепианной педагогики и исполнительского искусства XX века., Ер.: Комитас, 1998.
5. Нейгауз Г., Об искусстве фортепианной игры, М.: Музыка, 1988.
6. Савшинский С., Пианист и его работа, Л.: Советский композитор, 1961.

Կարոյան Մարինե Ռաֆիկի

դաշնակահար, Խ. Արուսյանի անվան ՀՊՄՀ-ի գործիքային
ամբիոնի դասախոս

ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԶԵՎ-ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ԱՐԸԱԿ ԱԲԳԱՐԻ ԱՂԱՍՅԱՆԻ ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Արշակ Աղամյանը (1884-1956) ընդհանուր և երաժշտության գեղագիտության բազմաթիվ կարևորագույն հիմնախնդիրների խոր և ուշագրավ մեկնաբանությունների հեղինակ է:

Աղամյանը ոչ միայն կոռ տրամաբանության գիտնական էր, այլև հասարակական գործիչ: 1924/26 թթ. Երևանի պետական կոնսերվատորիայի տնօրեն էր (այժմ ռեկտոր), Հայաստանի առաջին սիմֆոնիկ նվագախմբի կազմակերպիչն ու առաջին դիրիժորը:

Նրա հիմնական աշխատությունները ընդգրկված են երկու ժողովածուներում՝ 1961թ. լույս տեսած «Հոդվածներ արվեստի մասին», պրոֆեսոր Վ.Ֆ.Ասմուսի խմբագրությամբ և 1967թ.՝ «Հոդվածներ գեղագիտությունից» ժողովածու, որը կազմել և հրատարակության է պատրաստել Վ.Վ.Սարգսյանը: Նաև՝ մի առանձին աշխատություն՝ «Միջնադարյան Հայաստանի գեղագիտական հայացքները» 1955թ. լույս է տեսել առանձին գրքույկով: 1978թ., փիլիսոփայական գիտությունների թեկնածու Յ.Ի.Խաչիկյանը կազմել և հրատարակության է ներկայացրել «Արվեստի տեսության և գեղագիտության հարցեր» գիրքը, որը ծաղկաբաղ է նախորդ ժողովածուներից:

«Հոդվածներ արվեստի մասին» ժողովածուի առաջաբանում Վ.Ֆ.Ասմուսը գրել է. «Աղամյանը կարողացավ ճիշտ լուծել գեղագիտական տեսության հետ կապված մի շարք հարցեր, որոնց կապակցությամբ սովետական ժամանակակից գեղագիտության մեջ ոչ միայն կար ընդհանուր համաձայնություն, այլև գոյություն ունեն ոչ ճիշտ կարծիքներ, ծագում են գռեհիկ լուծումներ» (1. էջ 4):

Այս հոդվածում հիմնականում կանոնադառնանք Ա.Աղամյանի այն հայացքներին, որոնք վերաբերում են գեղարվեստական ձևին: Այս հարցին Աղամյանը հատուկ աշխատություն չի նվիրել, սակայն այս կամ այն խնդրի առիթով անդրադարձել է իր մի շարք հոդվածներում:

Գեղարվեստական ձևը Աղամյանը դիտում է, որպես գեղարվեստական մտածողության ամենակարևոր և յուրահատուկ օղակներից մեկը, որի միջոցով գեղարվեստական կերպարը գտնում է իր մարմնավորումն ու արտահայտությունը:

Անդրադառնալով գեղարվեստական ձևի գեներգիսի հարցին, Ադամյանը գտնում է, որ այն խիստ սոցիալական երևույթ է, որը ծագել է հենց սինկրետիկ արվեստի և առաջին ժայռապատկերների հետ (2. էջ 366-429):

«Ձև» հասկացության հետ մարդը բախվում է ոչ միայն արվեստում, քանզի բնության մեջ ոչինչ չկա, որ ձև չունենա: Ինչպես հայտնի է, ամեն մի երևույթի ձևը ինչ-որ չափով նրա ներքին բովանդակության, այդ բովանդակության ինչ-որ մի կողմի արտահայտիչն է: Բայց, միևնույն ժամանակ, իրականում չկա որևէ բան, որ ունենա այնպիսի կենտրոնացված, միևնույն վերջ հետևողական, անշեղ ու հավաքված ձև, ինչպիսին արվեստն ունի: Ինքը՝ գեղարվեստական ձևը, ծագում է կյանքի էմպիրիկ ձևից: Սակայն, արվեստի ձևի յուրահատկությունն այն է, որ այն էմպիրիկ ձևի հատկությունների ընդհանրացումն է: Ընդհանրացնելով կյանքի առանձին կողմերը՝ այն, միաժամանակ, չի ընդունում բազմաթիվ ոչ էական, պատահական կողմեր: Այսպիսով, գեղարվեստական ձևը էմպիրիկ ձևի այն բարձր աստիճանն է, որն ընկած է իրականության գեղարվեստական վերարտադրման հիմքում (2. էջ 373-390):

«Իրականության գեղարվեստական վերարտադրում» ասելով, հասկանում ենք նրա այնպիսի վերստեղծումը, երբ իրականությունը հանդես է գալիս իր ամենաէական կապերով ու փոխհարաբերություններով՝ որպես նրանց ամբողջական և օրգանական համակարգ:

Ինչպես իրականության ամեն մի երևույթ, արվեստը նույնպես ունի իր արտաքին և ներքին կողմերը: Սակայն այստեղ նրբությունը կայանում է նրանում, որ միայն արվեստում է արտաքինը ներքինի կենդանի արտահայտիչը: Ներաշխարհի լրիվ և անմնացորդ ձևակերպումը արվեստում բերում է արտաքինի լրիվ իմաստավորման: Գեղարվեստական ձևի յուրահատկությունն այն է, որ արտահայտելով արտաքինը, այն չի սպառվում դրանով, ինչպես այն կատարվում է այլ ձևերում: Երբեմն գեղարվեստական ձևը ծնվում է նաև իրական կյանքում: Դա լինում է այն ժամանակ, երբ մարդը գտնվում է հոգեկան ծանր լարման վիճակում՝ վշտի կամ ցնծալից ուրախության մեջ: Այդպիսի վիճակները երկար չեն տևում, սակայն, այնուամենայնիվ դրանք ծագում են և տարբերվում նրանով, որ այդ դեպքում կյանքի առանձին կողմերն ու տպավորությունները գիտակցության մեջ միանում են մեկ միասնական, դոմինանտող գծով: Գեղարվեստական ձևի ազդեցության ուժն այն է, որ իրականության այդպիսի ճանաչման ժամանակ մարդու մտքերն ու զգացմունքները ընդհանրացվում են մի որոշակի գաղափարի սահմաններում: «Յուրյ տուր արվեստում միայն այն, ինչն արդարացվում է ամբողջի տրամաբանությամբ»: Այս

ձևակերպումը Արիստոտելինն է: Վերջինս գտնում էր, որ ստեղծագործության կոմպոզիցիան պիտի կառուցվի այնպես, որ ամեն մի մասնիկ ունենա իր դերը և հնարավոր չլինի ստեղծել ամբողջություն առանց տվյալ մասնիկի: Դրան էր հանգում նաև V դարի հայ գիտնական Դավիթ Քերականը: Այս միտքը իրենց հերթին զարգացնում էին միջնադարի մտածողները՝ գտնելով, որ արվեստում պիտի առկա լինի միասնությունը՝ բազմազանության մեջ:

Սկզբունքորեն զարգացնելով այս հայացքները, Ադամյանը նշում է, որ գեղարվեստական ստեղծագործությունն իրականությունը պիտի արտացոլի որոշակի, այսինքն առաջնորդող տենդենցով և արտացոլված իրականության բոլոր կողմերը ենթարկի այդ ընդհանուր գաղափարին:

XIX դարի ամենաակնառու իդեալիստներից մեկը՝ Գեորգ Զիմմենլը, իր «Կյանքը և ժամանակակից գեղագիտությունը» աշխատության մեջ շարադրում է ձևի տեսությունը, որը շատ բանով համընկնում է Ադամյանի տեսության հետ: Նա գտնում է, որ գեղարվեստական ստեղծագործությունը մի ամբողջություն է, որը միասնություն է՝ բազմազանության մեջ: Նրանում ամեն մի մասնիկ որոշվում է ամբողջով, և՛ հակառակը: Դա նշանակում է, - շարունակում է Գ. Զիմմենլը, «որ գեղարվեստական ստեղծագործությունը ձև է, որում տարրերը մտնում են հարաբերության մեջ և ամբողջանում մի որևէ միասնության շրջանակներում» (3. էջ 89-107):

Զնայած ձևական մասնությանը, Ադամյանի և Զիմմենլի տեսություններն արմատապես տարբերվում են:

Զևը միասնություն է բազմազանության մեջ: Հարցի այս կողմին Ադամյանը վերաբերվում է որպես արտաքին և ձևական կողմի: Զիմմենլի տեսության մեջ պարզ չէ, թե տվյալ ձևում ինչպիսի (ընդգծումը մերն է – Մ.Կ) միասնության է բերված բազմազանությունը և ինչպիսին է այդ միասնության վերաբերմունքը իրականության միասնության նկատմամբ: Չէ՞ որ նույն իրականությունը կարող է արտացոլվել գեղարվեստական տարբեր ստեղծագործություններում, և նրանցից յուրաքանչյուրում կգործի «միասնություն բազմազանության մեջ» օրենքը, այսինքն՝ նրանցից յուրաքանչյուրը կունենա յուրահատուկ գեղարվեստական ձև:

Այսպիսով, միևնույն «միասնություն բազմազանության մեջ» օրենքը՝ որպես մի ձևական հատկություն, իր հետ գեղարվեստական ձևերի նույնություն չի բերում: Ըստ Ադամյանի, օրենքը մեկն է, դրսևորման ձևերը՝ բազմաթիվ: Այդ միասնությունը պահպանվում է այլևայլ մոտեցմամբ, այսինքն արվեստում տարբեր ձևերի միջոցով իրականությունը արտացոլվում է տարբեր կերպ:

Այսպիսով, արվեստի խնդիրն է, իրականությունը ցույց տալ ոչ միայն որպես միասնություն, այսինքն ձևի միջոցով, այլ այն ցույց տալ՝ որպես մի **որոշակի՝ միասնություն**, այսինքն՝ որպես մի **որոշակի՝ իրականություն, որոշակի՝ ձևի միջոցով** (ընդգծումը մերն է – Մ.Կ.):

Այսպիսով, ըստ Ադամյանի, իրականության գեղարվեստական արտացոլման գործընթացում ձևի ֆունկցիան կայանում է այդ իրականության մեջ նրան հատուկ միասնության սկզբունքի բացահայտման և գեղարվեստական ստեղծագործությունը՝ որպես մի ամբողջություն՝ այդ նույն սկզբունքով ստեղծելու մեջ:

Եվ այսպես, գեղարվեստական ձևի ճանաչողական բնույթը հսկայական է:

Ձիմմելը այս հարցում կանգնում է ֆորմալիստական ուղու վրա: Նրա համար արվեստի ճանաչողական կողմը կապ չունի նրանում ձևի առկայության հետ:

Ադամյանը նշում է, որ արվեստում ամբողջությունը հասկացվում է ոչ միայն նրա շաղկապվածության միջոցով, այլ նրանցից յուրաքանչյուրի տեսանկյունից: Արվեստից դուրս ամեն մի ձևի առանձին մասերը առարկայի էության և ճանաչման հետ նույնպես գտնվում են համապատասխանության մեջ, բայց միայն արվեստի ստեղծագործության մասերն են նրա էության անմիջական արտահայտիչները, որոնք դառնում են նրա լեզուն: Ավելին, այնտեղ, որտեղ կոմպոզիցիայի որևէ մի մաս չի մասնակցում բովանդակության ու գաղափարի հաղորդմանը, այդտեղ վերջիններս չեն բացահայտվում ամբողջ խորությամբ ու լայնությամբ: Դա տարածվում է նաև երաժշտության բնագավառի վրա: Այսպես, օրինակ. Բախի, Բեթհովենի, Չայկովսկու երաժշտության մեջ կոմպոզիցիան և արտահայտչական բոլոր միջոցները՝ լադը, կոմպոզիցիան և տոնայնական համակարգերը, թեմատիկ գոյացումները, ինչպես և ամբողջ ֆակտուրան, գործիքավորումը և այլն, այս բոլորը որպես արտահայտչամիջոցներ, խիստ ենթարկված են ստեղծագործության միասնական, ընդհանուր բովանդակությանը:

Բեթհովենի ստեղծագործություններում, օրինակ, բովանդակությունից անջատ մոդուլյացիոն պլանի ուսումնասիրումը անպայման կկանգնեցնի անհուսալի ֆորմալիստական փակուղու առաջ:

Դրա հետ մեկտեղ Ադամյանը գտնում է, որ ամբողջական երևույթի բովանդակությունը լրիվ հասկանալու համար բավական չէ ըմբռնել նրա առանձին մասերն ու կապերը: Գեղարվեստական բովանդակության ամբողջական ընկալումը նախատեսում է գեղարվեստական յուրացում, ինչպես և հակառակը՝ բավական է չհասկանալ գեղարվեստական ստեղծագործության բովանդակությունն ու իմաստը, որ-

պէսզի դրանով իսկ չհասկացվի նրա ձևը: Արվեստում, հատկապես, գեղարվեստական ձևի միջոցով է իրագործվում ճանաչումը, որը և վերաբերմունք է առաջացնում իրականության նկատմամբ:

Ադամյանը գտնում է, որ ձևի ու բովանդակության անժխտելի ու ամենասերտ կապի հետ մեկտեղ, նրանք ոչ՝ նույնական են և ոչ՝ էլ՝ համանշանակ: Այն դեպքում, երբ բովանդակությունը այն իրականությունն է, որին մենք վերաբերում ենք ձևի կողմից ընդհանրացման միջոցով, այդ նույն ժամանակ ձևը այդ բովանդակության արտահայտման միայն միջոցն է, լեզուն:

Ադամյանը, ձևը, բովանդակության նման, դիտում է որպես գործընթաց:

Բովանդակությունն այնքանով է գործընթաց, որ այն կարծես կազմավորվում, ձևավորվում է երևակայության մեջ: Ձևը ստեղծում է նույնպես գործընթաց, քանի որ այն սկիզբ և զարգացում ունեցող տարրեր կապերի վերապրումն է: Միայն այն բանից հետո, երբ բովանդակությունը բավական բացահայտվել է ձևի, իսկ ձևը՝ բովանդակության միջոցով, այն հառնում է որպես որոշակի բովանդակության ավարտված ձև:

Ձևը ենթադրում է գիտակցության ստեղծագործական աշխատանք՝ ուղղված այն բանին, որ լեզվի ու կոմպոզիցիայի միջոցով ընկալվի նրանց սկզբնական իմաստը, տրամաբանությունը, կապերի ու փոխհարաբերությունների համակարգը: Ամեն մի ճանաչողական գործընթացի նման, ձևի ստեղծումը միաժամանակ ստեղծագործական գործընթաց է: Այն ճանաչելն ու «ստեղծելը» հանգեցնում է բովանդակության բացահայտմանը: Սակայն հետաքրքրականն այն է, որ գեղարվեստական ստեղծագործության գեղագիտական ճանաչման ընթացքում, սուբյեկտիվ գնահատմամբ, ձևը ուշադրության և հետաքրքրության միակ աղբյուրն է: Այսպիսով, ածանցյալը դառնում է հիմնական:

Ադամյանի ամենահետաքրքրական հայտնագործություններից մեկն այն է, որ նա ձևը ընդունում է որպես բովանդակության զգացական փոխարինում, այսպես ասած, տեղակալում (4. էջ 256):

Վերը նշեցինք, որ արվեստում ճանաչման գործընթացը ծնում է վերաբերմունք, որը արդյունք է ստեղծագործության կապերի ու փոխհարաբերությունների ընդհանրացման: Դա է արվեստի երկկողմանի ֆունկցիան՝ ցույց տալ մի բան և ծնունդ տալ մի ուրիշ բանի: Գեղարվեստական ձևի տեսանկյունից գեղարվեստական բովանդակության ամեն մի մասնիկ որոշվում է այդ բովանդակության վերը նշված երկկողմանի հատկանիշով:

Հատկապես այս իմաստով Ադամյանը ուսումնասիրում է գեղագի-

տության երկու ասպարեզների՝ արվեստի ու գեղեցիկի ներքին կապերը (2. էջ 183-199):

Մարդկային կյանքի ամբողջ ընթացքում մարդիկ ճանաչում էին գեղեցիկը և գեղեցկության մեջ կարողանում էին հիանալ նրա ձևով: Ինչպիսին էլ լինի գեղեցիկի իրական բովանդակությունը, նրա ամմիջական դրսևորման ոլորտը միշտ էլ եղել է նրա ձևը: Այսպիսով, լեզուն, որով խոսում ու հմայում է գեղեցիկը, նրա ձևն է: Ինչ էլ որ այն արտահայտի, նա այդ ասում է հենց ձևի, միասնական բովանդակության հետ նրա բոլոր արտահայտչամիջոցների ծայրահեղ համաձայնեցվածության միջոցով: Առանց ձևի չկա գեղեցկություն: Արվեստը ստեղծվում է գեղեցիկի օրենքներով, քանի որ այն ստեղծվում է ձևի օրենքներով: Արվեստում խոսքը ոչ թե միայն ձևի, այլ գեղեցիկ ձևի մասին է:

Իսկ «գեղեցիկ ձև» հասկացության տակ պետք է հասկանալ ոչ թե կերպարի ու գաղափարի վերացական միասնությունը, այլ այդ միասնության որոշակի սկզբունքը:

Աղամյանը գտնում է, որ արվեստագետը նորություն է փնտրում ոչ թե ամենագեղեցիկը գտնելու նկատառումով, այլ այն պատճառով, որ ամեն մի նոր գեղեցկություն ամեն անգամ կյանքի նոր կողմեր է բացահայտում և գեղեցիկի բազմազանության մեջ արվեստագետը գտնում է կյանքի բազմակողմանիությունը:

Այսպիսով, գեղեցկության ձև ասելով Աղամյանը հասկանում է գեղեցկության ամբողջի բոլոր մասերի զուգակցումն ու կցորդումը այդ մասերի սերտ կերպով միացված ընդհանուր ու միասնական ֆունկցիայով՝ այդ ամբողջի գաղափարի ու բովանդակության՝ նրանցից յուրաքանչյուրի յուրատեսակ արտահայտմամբ:

Իր աշխատություններում Աղամյանը որոշակի կերպով սահմանագատում է այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են «գեղարվեստական տարր», «սխեմա», և «գեղարվեստական նյութ» կատեգորիաները՝ գեղարվեստական ստեղծագործության վերլուծությունը ավելի դյուրին և որոշակի դարձնելու նպատակով:

Անդրադառնալով «սխեմա» կատեգորիային, Աղամյանը նշում է, որ գեղարվեստական պրակտիկան հատկապես երաժշտության բնագավառում «ձև» կատեգորիային է վերագրում այնպիսի կայունացված սխեմաներ, ինչպիսիք են ռոնդոն, սյուիտը և սոնատը: Աղամյանը գտնում է, որ դա լրիվ բնական երևույթ է, քանի-որ բովանդակության տեսանկյունից նրանք, իրոք, գեղարվեստական ձևի դեր են կատարում: Նրբությունն այստեղ այն է, որ միևնույն ձև դարձած սխեմայում ցուցադրված տարբեր կերպարներն ունեն յուրահատուկ գեղարվեստական ձև, միասնության որոշակի սկզբունք, որը բացա-

հայտում է նրանց ներքին կապը: Այսպես, օրինակ, Բեթովենի 32 դաշնամուրային սոնատներից շատերը գրված են միևնույն սոնատային սխեմայում, բայց չկա թեկուզ 2 սոնատ, որոնցում խիստ կերպով չտարբերվեն կերպարները՝ իրենց գեղարվեստական ձևերով:

Որպես գեղարվեստական տարր, Ադամյանն ընդունում է ոչ թե ստեղծագործության ամեն մի մաս, շտրիխ, այլ այնպիսի մաս, որը ինքը արդեն որոշ չափով ընդհանրացված է և արտահայտում է բովանդակության ու գաղափարի ինչ-որ մի կողմը: Օրինակ՝ ճարտարապետության մեջ գեղարվեստական տարր կլինեն ոչ թե ամեն մի քար, այլ միայն ճարտարապետական ավարտված հատվածներ, որոնք արտահայտում են ամբողջ շինության ընդհանուր բովանդակության մի կողմը: Գեղարվեստական ստեղծագործության յուրաքանչյուր մաս դառնում է նրա ձևի մասնիկը, երբ այն հանդես է գալիս որպես գեղարվեստական ենթատեքստի ավարտված տարր:

Այս առումով Ադամյանը հատկապես ընդգծում է, որ երբեք չի կարելի գեղարվեստական ձևի որևէ մի տարր դիտել այն որոշող մասերի ամբողջական համակարգից դուրս, որը բացահայտում է տվյալ տարրի գեղարվեստորեն իմաստավորված նշանակությունը: Այս պայմանի պահպանման դեպքում հնարավոր է ճիշտ հասնել ստեղծագործական վերլուծության, այսինքն՝ կամ բարձրանալ ելակետից դեպի բովանդակության և գաղափարի ամբողջական բացահայտումը՝ այսպիսով կատարելով ցածր տիպի վերլուծություն, կամ էլ իջնել ամբողջից նրա առանձին մասերին՝ կատարելով բարձր տիպի վերլուծություն: Տրամաբանական երկու կատեգորիաները՝ ձևը և բովանդակությունը, իրենց հիմքում ունեն երրորդը՝ նյութը: Եթե բովանդակությունը բացահայտվում է ձևի միջոցով, իր հերթին ձևը տրվում է նյութի միջոցով: Վերջինս նրա սուբստրատն է:

Ինչպես գեղարվեստական ձևը ստեղծվում է իրական, էմպիրիկ ձևի հիման վրա, այնպես էլ գեղարվեստական նյութը ստեղծվում է իրական նյութի հիման վրա: Այս դեպքում գործում են ստեղծագործական վերափոխումը և զգացական ընդհանրացումը: Օրինակ՝ ներկայանալի ներկը բնական նյութ է: Իսկ նկարչի ստեղծած արվեստի ստեղծագործության մեջ այն փոխում է իր հատկությունները, բնական նյութից դառնում ծառ, դեմք, գույն, բնական նյութից վերափոխվում է գեղարվեստական նյութի: Այսպիսով, բնական նյութը, որի հատկությունները ստեղծագործական վերամշակման շնորհիվ դառնում են արվեստի լեզու, նրա արտահայտման միջոցը, վերափոխվում է գեղարվեստական նյութի:

Երաժշտության մեջ որպես գեղարվեստական նյութ է ծառայում ինտոնացիան, որը պարունակում է այնպիսի մշակված հատկու-

քյուններ, ինչպիսիք են տևողությունը, բարձրությունը, ուժը, տեմբը, ռիթմն ու լադը: Այս բոլորի միասնությունը ստեղծում է մի բարդ ամբողջություն՝ ինտոնացիան, որը երաժշտական արվեստի լեզուն է:

Սակայն նախքան փոխհարաբերությունների մեջ մտնելը նյութը պահպանում է իր վերացական նշանակությունը: Գեղարվեստական տարրի նման, նյութն իր տեղը, դերն ու նշանակությունը գտնում է հատկապես գեղարվեստական ենթատեքստում:

Այսպիսով, գեղարվեստական նյութ է ամեն մի արտահայտչամիջոց՝ իր վերացական նշանակությամբ: Վերջինիս անցումը անհատական որոշակի նշանակության, իր հետ բերում է նյութի անցում՝ ձևին: Ստեղծագործության բովանդակության բացահայտման առաջին փուլում ունկնդիրը դեռ լրիվ չի տիրապետում ձևին, չի ընկալում նրա ներքին տրամաբանությունը և, բնականաբար նա տեսնում է ամբողջի առանձին մասերը՝ առանց նրանց ներքին բավականաչափ զուգակցման և ամբողջի հետ նրանց համաձայնեցման: Բովանդակության բացահայտման այս փուլում վերջինիս առանձին մասերը դառնում են հատկապես ինքնուրույն ու ինքնաբավ՝ պահպանելով, սակայն, վերացական նշանակությունը: Այս դեպքում հանդիսականը տեսնում է գեղարվեստական նյութը: Բայց այն չափով, ինչ չափով որ նա թափանցում է ամբողջի, նրա տրամաբանության մեջ, նրա արտահայտչամիջոցները արդեն դառնում են մասեր, որոնք արտահայտում են նույն այդ ամբողջը, այսինքն վեր են ածվում ձևի առանձին հատվածների: Սակայն գեղարվեստական նյութի՝ գեղարվեստական ձևի մեջ այս անցումը կրում է դիալեկտիկական բնույթ և պրակտիկորեն հնարավոր չէ այն նկատել:

Աղամյանը նշում է, որ գեղարվեստական գոյացումներում անհրաժեշտ է տարբերել նյութի ու ձևի հատկանիշները: Օրինակ, երաժշտական արվեստում որպես նյութ, թե՞ որպես ձև է հանդես գալիս լադը: Երբ անտիկ մտածողները առանձնացնում էին լադերը՝ ըստ հուզական ներգործության, արդյոք նրանք գործ ունեին նյութի՞, թե՞ ձևի հետ: Աղամյանը գտնում է, որ քանի որ պյութագորականները նկատի ունեին լադերի վերացական արտահայտչականությունը, նրանք գործ ունեին գեղարվեստական նյութի հետ: Այլ է պատկերը, երբ այն դիտվում է որոշակի ստեղծագործության մեջ: Այս դեպքում լադը ընկալվում է որպես գեղարվեստական ձևի մի մաս:

Այսպիսով, գեղարվեստական ձևը գեղարվեստական մտքի անմիջական զգացական հաղորդման միջոց է: Այս յուրահատկությունից պիտի բխեն նրա վերլուծության մեթոդներն ու ձևերը: Իր աշխատություններում Աղամյանը հիմնալի վերլուծում է տարբեր դարաշրջանների, արվեստի տարբեր ճյուղերի, տարբեր արվեստագետների գոր-

ծեր, ցույց տալով գեղարվեստական ստեղծագործության վերլուծության հիասքանչ օրինակներ:

Ադամյանը գտնում էր, որ ձևի վերլուծության ընթացքում պետք է ճիշտ բացահայտվի ստեղծագործության բովանդակությունը, որոշվի գաղափարը և այդ նույն գաղափարը ցույց տրվի բովանդակության առանձին մասերում: Այս դեպքում այդ մասերը փոխակերպվում են գեղարվեստական ձևի առանձին հատվածների: Այսպես օրինակ, երաժշտության մեջ ամեն մի մասնակիություն՝ ռիթմիկ, հարմոնիկ, մելոդիկ և այլն, նույն չափով որոշում է ամբողջը, ինչ չափով որ ինքն է որոշվում այդ ամբողջի մեջ:

Ադամյանը արդարացիորեն նշում է, որ գեղագիտության տեսության մեջ, ինչպես և կատարողական արվեստում, հաճախ գեղարվեստական ձևի վերլուծության փոխարեն կատարվում է գեղարվեստական նյութի վերլուծություն: Իսկապես, նյութը բովանդակությունից անկախ ձև է այնքանով, որքանով ձևը նյութ է, ընկալված՝ որպես գեղարվեստական կերպար:

Այսպիսով, գեղարվեստական ձևի վերլուծության ժամանակ կարևոր է չմնալ նյութի սահմաններում, այլ տեսնել այդ նյութի անցումը առանձին, որոշակի նշանակության, այսինքն՝ ձևի մեջ:

Ադամյանը գտնում է, որ վերլուծության ընթացքում սխալվելու մյուս պատճառն այն է, որ հաճախ այն կատարվում է միակողմանի, այսինքն՝ վերլուծությունը կատարվում է ձևական աճի ձևով՝ սկզբում վերլուծում են եզակի պահերը, ապա՝ ընդհանուրը, այնինչ ամեն մի եզակիություն պետք է դիտվի ամբողջի լույսի տակ՝ այդ ամբողջի գերակշռող նշանակությամբ: Այդ մեթոդական սխալը հանգեցնում է այն բանին, որ վերլուծությունը վրիպում է ամեն մի սյուժետային եզակիության հանդիպելիս՝ չտեսնելով վերջինիս իսկական ձևն ու դերը ամբողջի մեջ:

Ադամյանը նշում է, որ գեղարվեստական ամեն մի վերլուծության խնդիրը կայանում է նրանում, որպեսզի այն սովորեցնի գեղարվեստորեն, զգայական ձևով ըմբռնել արվեստը, եզակիի միջոցով թափանցել ամբողջի մեջ, ինչպես և զգալ ընդհանուրը՝ եզակիի մեջ:

Այս խնդրի լուծման տեսական և պրակտիկ դժվարությունը կայանում է նրանում, որ վերլուծության ընթացքում հաճախ նկատի չի առնվում այն փաստը, որ ընդհանրացման ֆունկցիա ունի ոչ միայն միտքը, այլև՝ զգացմունքը, և հենց դրանով է պայմանավորվում մարդկային գիտակցության այդ երկու ոլորտների անընդմեջ պատմական զարգացումը:

Իր աշխատություններում Ադամյանը շոշափում է մասնատվականացման հարցը՝ կապված գեղարվեստական ձևի հետ: Նա գտնում է,

որ տիպականությունը գեղարվեստական ձևի ամենակարևոր և էական կողմերից է, քանի որ այն արվեստը, որը զուրկ է տիպական գծերից, զուրկ է նաև ճանաչողական հետաքրքրությունից, քանի որ այն, փաստորեն, խոր կապեր չունի իրականության հետ: Միաժամանակ նա նշում է, որ միայն այն տիպականը կարող է ֆիքսվել արվեստում, որը նշանակալից է հասարակության կյանքում և որն այդ կյանքում ի վիճակի է արթնացնել բարոյագիտական վերաբերմունք իր նկատմամբ (2. էջ 269-289):

Ընդհանուր առմամբ այսպիսիք են գեղարվեստական ձևի հետ կատարված Ա.Ա.Ադամյանի գեղագիտական հայացքները, որոնք թարմություն բերեցին գեղագիտական տեսության մեջ՝ միաժամանակ պարզելով բազմաթիվ հարցեր՝ արվեստի վերաբերյալ:

Յ.Խաչիկյանը գրել է. «Արշակ Ադամյանի գեղագիտական ժառանգությունը սկիզբ դրեց Հայաստանում գեղագիտական մտքի զարգացման որակապես նոր փուլին» (5. էջ 267-268):

ԾԱՆՈԹԱԳՐՈՒՅԹՈՒՆ

1. Асмус В. Ф., Предисловие к кн.: Адамян А., Статьи об искусстве., М.: Музгиз., 1961.
2. Адамян А., Статьи по эстетике., /сост. В. Саркисян., Ер.: Айастан, 1967
3. Зиммель Георг., Жизнь и современная эстетика., М.: Музыка, 1982.
4. Адамян А., Статьи об искусстве., М.: Музгиз., 1961.
5. Хачикян Я. И., Очерк развития эстетической мысли в Армении., М.: Искусство, 1976.

Վարդյան Լուիզա Գևորգի

Կոմիտասի անվան ԵՊԿ օպերային պատրաստման
ամբիոնի դոցենտ

ԴԱՍԱԿԱՆ ՊԱՐ ԴԱՍԸՆԹԱՑԻ ԾՐԱԳԻՐ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԻԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԵՎ ԹԱՏԵՐԱԿԱՆ ԲՈՒՀԵՐԻ ՀԱՍԱՐ

Համառոտ քննության, դասընթացի նպատակներն ու խնդիրները

Թատրոնի ապագա դերասանի հարմոնիկ զարգացման համար կարևոր նշանակություն ունի «դասական պար» դասընթացը, որը բացի թատերական խմբերից ուսումնասիրվում է նաև երաժշտական բուհերի համապատասխան բաժիններում, ըստ դասընթացներում հատկացված ժամերի:

Պարի հիմնավոր զարգացումը անմիջականորեն նպաստում է ապագա դերասանի բեմական կեցվածքի ձևավորմանը,

- մարմնի կոորդինացիային,

- ռիթմի զգացողությանը և վերջապես տվյալ դերի հոգեբանական առավել նուրբ շերտերի բացահայտմանը:

Դասական պարի վարժանքները (հենաձողի մոտ) վերացնում են ուսանողի ֆիզիկական թերությունները՝

- մկանային լարվածությունը,

- ուսերի առաջ թեքվածությունը,

- պարանոցի ողերի իջեցումը,

- ծուռաթությունը և այլն:

Ի վերջո, դասական պարի հիմնական խնդիրն է ամենօրյա կրկնվող վարժանքներով կոփել ուսանողին,

- զարգացնել մկանային համակարգը և ազատ ու անկաշկանդ կառավարել սեփական մարմինը:

Դասական պարն օգնում է զարգացնել ուսանողի արտահայտչական հնարավորությունները,

- բեմական ռիթմը, որը վերջին հաշվով, բեմական գործողության կապող, միավորող դրամատիկ պահն է (գործոնն է):

Դասընթացի ծավալը և ուսումնական աշխատանքի տեսակները*

Պարապմունքների տեսակը	Ընդամենը ժամ	
1	2	3
Ուսումնառության տևողություն (կիսամյակներ)	272	
Լսարանային	272	

II Կիսամյակ

Նախնական գրույց դասընթացի մասին:

II կիսամյակի գլխավոր խմբերն է՝ մարմնի ճիշտ կեցվածքը, գլխի, ձեռքերի և ոտքերի, մկանների զարգացման, ճկունության և հոդերի շարժունակության դրվածքը:

Վարժանքներ հենաձողի մոտ (կատարել դեմքով դեպի հենաձողը):

1. Ոտքերի դիրքեր I, II, III, IV, V:
2. Demi-plies (փոքր ծնկածալում) կատարել I և II դիրքերով:
3. Battements tendus (ոտքի ձգում) I դիրքով:
4. Battements tendus et demi-plies (ոտքի ձգում փոքր ծնկածալումով) I դիրքով:
5. Battements tendus jete's (ոտքի ձգում նետելով) I դիրքով:
6. Rond de jambe par terre (ոտքով շրջան գետնի վրա) սկզբում 1/4 շրջանով, այնուհետև 1/2 շրջանով:
7. Grands battements jetes (ոտքի մեծ նետում) I դիրքով:

Առաջարկված վարժանքները կատարել դեմքով հենաձողի ողնաշարի ճիշտ դիրքում լինելու համար:

Դահլիճի կենտրոնում:

1. Ձեռքերի դիրքեր I, II, III:
2. Demi-plies (փոքր ծնկածալում) I և II դիրքերով:
3. Battements tendus I դիրքով:
4. Balance' – օրորված:
5. Souter – (թռչել) I, II, III և V դիրքերով:

*Այս ժամաբաշխումը երաժշտական բուհերի համար պարտադիր չէ:

III կիսամյակ
Հենաձողի մոտ կրկնել II կիսամյակի վարժանքները՝ արագացնելով տեմպը:

Կատարել վարժանքները՝ մեկ ձեռքով բռնելով հենաձողը:

Ավելացնել՝

1. Passe par terre (անցում գետնի վրա):
2. Rond de jambe par terre (նոքով շրջան գետնի վրա) միաձույլ:
3. Batterments tandus jete's, pigues (նոքի ձգում նետելով և հարվածելով գետնին):

4. Batterments Frappe's (հարվածել) կողք:
5. Batterments fomdus (հոսող) կողք:

6. Grands batterments jete (նոքի մեծ նետում) :
7. Վարժանքները կատարել I և IV դիրքերով:

Դահլիճի կենտրոնում:

1. Batterments tandus (նոքի ձգում) I դիրքով խաչաձև:
2. Demi plies և grand plies I, II, և V դիրքերով:
3. Batterments jete' I դիրքով խաչաձև:
4. Grands batterments jete I դիրքով խաչաձև:
5. Temps lia par terre (միացած շարժում գետնի վրա):
6. Port de bras (ձեռքերի փոփոխում) I, II և III ձևեր:

Թռիչքներ:

1. Souter (թռչել) I, II և V դիրքերով:
2. Echappe (դուրս գալ):
3. Changement de pieds (նոքերի փոփոխում) V դիրքով:
4. Pas chasse' (հետապնդող թռիչք):

IV կիսամյակ

Հենաձողի մոտ կատարվող վարժանքներին ավելացնել՝

Batterments retires (ձգել, քաշել):

Releve's կիսամատների վրա I, II, III և V դիրքերով և մեկ նոքի վրա հետևի նոքը coupe-ով (կտրված):

Պտույտներ կիսամատների վրա 180⁰ և 360⁰:

Դահլիճի կենտրոնում:

Յուրացվածին ավելացնել՝

Դիրքեր – croisse' և efface' (դասական պարի խաչաձև և ոչ խաչաձև դիրքեր):

Arabesques – (արաբական նկարաքանդակ) I,II,III և IV:
Pas de bourre’ (նոքերի փոփոխում):

Թռիչքներ

Souter’, echappe’ և changement de pieds – կատարել փոփոխում
դիրքից դիրք:

Կազմել պարային էտյուդներ անցած ծրագրի հիման վրա:

V կիսամյակ

Հենաձողի մոտ կրկնել և ավելացնել բարդ վարժանքներ:

Դահլիճի կենտրոնում:

Adajio – (դանդաղ) ոչ բարդ ձևը:

Pas glissade – (սահում):

Պտույտներ՝

Pirouette’ – (պտույտ տեղում):

Պտույտներ հենաձողի մոտ V դիրքից, իսկ դահլիճի կենտրոնում
IV և V դիրքերից:

Tours chaine’s – (շղթայաձև):

Pas assemble’ – (միաժամանակ հավաքած նոքերի դիրքը):

Pas jete’ – (նետելով):

Grand jete’ – (մեծ նետում):

Անցած ծրագրի հիման վրա կազմել պարային էտյուդներ ավելի
բարդ տարրերով:

Ուսումնասնողական գրականություն Հիմնական գրականություն

1. Թատերական ինստիտուտների «պար» դերասանական և ռեժիսորա-
կան բաժինների համար ծրագիր, Մոսկվա, 1980թ.:

Լրացուցիչ գրականություն

Վասիլևա Ե., «Պար» Մոսկվա, 1968թ.:

Վարդյան Լուիզա Գևորգյան

Կոմիտասի անվան ԵՊԿ օպերային պատրաստման
ամբիոնի դասախոս

ՌԻԹՄԻԿԱ. ԴԱՍԸՆԹԱՑԻ ԾՐԱԳԻՐ ՌԻՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԵՎ ԹԱՏԵՐԱԿԱՆ ԲՈՒՋԵՐԻ ՀԱՄԱՐ

Համառոտ բնութագրում՝ դասընթացի նպատակներն ու խնդիրները

«Երաժշտառիթմիկ դաստիարակություն» դասընթացը երաժշտական-թատերական բուհերի հնչյունային ռեժիսուրայի բաժնի ուսանողների համար կարևորագույն միջոց է, որտեղ հնարավորություն է ընձեռում երաժշտական տերմիններն օգտագործել շարժման մեջ՝ տալով ապագա դերասանին և ռեժիսորին ավելի երաժշտա-զգացողական մոտեցում դերասանի վարպետության հմտությունները կատարելագործելու:

Երաժշտական դաստիարակությունը ապահովող դասընթացների շարժում, «Երաժշտառիթմիկ դաստիարակություն» դասընթացը առանձնահատուկ դեր է կատարում, ապահովելով երաժշտական գրագիտությունը միահյուսելու շարժողական ապարատի հետ և տալիս է ռիթմի շարժողական ընդունակությունների զարգացում:

Դասընթացի նպատակն է օգնել ուսանողին հասկանալու և հաղթահարելու ռիթմի զգացողությունը երաժշտական և բեմական արտահայտչամիջոցների, համադրությունների փոխկապակցության մեջ:

Երաժշտական-թատերական բուհի հնչյունային ռեժիսուրա բաժնի «Երաժշտառիթմիկ դաստիարակություն» դասընթացին հատկացված է 1 կիսամյակ, որի ընթացքում անհրաժեշտ է ուսուցանել երաժշտական դինամիկայի նշանների և տարրական տեսության օգտագործումը շարժման տարրերի միջոցով:

**Դասընթացի ծավալը և ուսումնական
աշխատանքի տեսակները***

Պարապմունքների տեսակը	ընդամեն ըն			
	ժամ	I	II	
1	2	3	4	
Ուսումնառության տևողությունը (կիսամյակներ)	68			

III կիսամյակ (I բաժին)։

Քայլերգ տարբեր տեսակերով՝ andante - դանդաղ, moderato - միջին, allegro - արագ։

Կանգնել շրջան կազմած և աստիճանաբար տեսակը փոխելով ամեն տակտի սկզբին փոխանցել իրար որևէ իր։

Հասկացողություն 2/4-ի մասին։

Բացատրել, որ 2/4-ի առաջին մասը հնչում է ուժեղ (շեշտադրված), իսկ երկրորդ մասը՝ թույլ։ Այդ ձևով ծափ տալ, այնուհետև կատարել 2/4-ի տակ վարժություններ։ Օրինակ՝ առաջին ուժեղ մասի ժամանակ քայլել՝ բարձրացնելով ոտքը։ Քայլելու հետ միաժամանակ ձեռքերով ցույց տալ դիրիժորական չափը։

Հասկացողություն 3/4-ի մասին։

Կատարել նույնը ինչ որ 2/4-ի դեպքում, քանի որ այստեղ էլ տակտի առաջին մասը հնչում է ավելի ուժեղ, քան՝ մնացած երկուսը։

Կատարել հետևյալ վարժությունը.

ա) քայլել շրջան կազմած, երկու քայլ առաջ, մեկ քայլ ետ (աջ և ձախ ոտքով), միաժամանակ առաջին քայլի ընթացքում աջ ձեռքը բարձրացնել առաջ, երկրորդ (առաջ) քայլի ժամանակ ձախ ձեռքը բարձրացնել կողք, երրորդ ետ քայլի ժամանակ ձեռքերը իջեցնել ներքև և ծափ տալ։

բ) ոտքերով կատարել նույնը, իսկ ձեռքերով ցույց տալ դիրիժորական չափը։

4. Հասկացողություն 4/4-ի մասին։

Քայլել շրջան կազմած, ոտքը բարձրացնելով ցույց տալ տակտի առաջին մասի ուժգնությունը, իսկ ձեռքերով ցույց տալ դիրիժորական չափը։

5. Հասկացողություն ամբողջ, կես, քառորդ և ութերորդական տևողությունների մասին։

*Այս ժամաբաշխումը երաժշտական բուհերի համար պարտադիր չէ։

ա) Քայլել շրջան կազմած, ոտքերով ցույց տալ ամբողջ, կես, քառորդ և ութերորդական տևողությունները, իսկ ձեռքերով՝ 4/4 քառորդ:

6. Հասկացողություն forte-ի (ուժեղ) և piano-ի (մեղմ) մասին:

Forte-ի ժամանակ քայլել ոտքը բարձրացնելով, իսկ piano-ի դեպքում քայլել շրջան կազմած կիսամատների վրա:

7. Հասկացողություն legato-ի (կապակցված) և staccato-ի (մասնատված) մասին:

ա) legato-ի դեպքում կանգնել շրջան կազմած և վալսի տակ շղթա կազմելով շարժվել մեկը ժամացույցի ալաքի ուղղությամբ, մյուսը՝ հակառակ ուղղությամբ, իրար միացնելով, ամեն տակտի սկզբին մեկ աջ, մեկ ձախ ձեռքերը:

բ) staccato-ի դեպքում բարձրանալ կիսաթաթերի վրա կատարել (միացրած թաթերով) 4 ցատկ առաջ, 4 ցատկ ետ, 4 ցատկ պտույտով աջ 360° և 4 ցատկ պտույտով ձախ 360°:

8. Հասկացողություն անհավասար երաժշտական նախադասությունների մասին:

Վարժությունը կատարել Շուբերտի “Koleco” ստեղծագործության ներքո:

9. Հասկացողություն տակտի սկզբի և երաժշտական նախադասության սկզբի մասին:

ա) Լսել երաժշտությունը և գնդակներով խփելով հատակին, նետել վերև կամ իրար (ըստ ազդանշանի) նշել տակտի սկիզբը:

բ) Ամեն նախադասության սկզբում դուրս գալ վարագույրի հետևից:

10. Ուշադրության վարժություններ:

Ուսանողները կանգնում են շրջան կազմած:

(մեկ) ազդանշանի ժամանակ քայլում են շրջանով առաջ

(երկու) ազդանշանի ժամանակ քայլում են շրջանով ետ

(երեք) ազդանշանի ժամանակ փոխել քայլի ուղղությունը

(չորս) ազդանշանի ժամանակ կատարել 4 քայլ կենտրոն

(հինգ) ազդանշանի ժամանակ կատարել 4 քայլ ետ

(վեց) ազդանշանի ժամանակ կանգ առնել տեղում

(յոթ) ազդանշանին շարունակում են կատարած շարժումը:

Ազդանշանները տալ խառը:

Տրամադրության վարժություններ:

Ըստ տրամադրության՝ մինդր կամ մաժոր, ամեն նախադասության ընթացքում կատարել համապատասխան գործողություն:

- III կիսամյակ II բաժին
 Կոորդինացիոն վարժություններ:
 Վարժությունը կատարել 4/4-ի տակ:
 Աջ ձեռքը՝ առաջ, վեր, կողք, ցած:
 Ձախ ձեռքը՝ կողք, վեր, առաջ, ցած:
 Կատարել երկու ձեռքերը միասին և այնուհետև փոխել (աջինը ձախի, ձախինը աջի):
2. Երգել բոլորին ծանոթ մի երգ, խմբով: Ազդանշանի դեպքում՝ կամ բոլորը լռում են և երգում մտքում, կամ նշված ուսանողը շարունակում է երգել, կամ բոլորը միասին են երգում կամ լռում:
3. Հասկացողություն ռիթմիկ նախշի մասին:
 Ռիթմիկ նախշը հնչյունների բարձրությունների փոխհարաբերություններից անկախ, ռիթմիկ տարբեր տևողությունների հաջորդակա-
 նությունն է:
- Լսել երաժշտությունը, ծափ տալ ռիթմիկ նախշը, քայլել նախշով երաժշտության ներքո և առանց երաժշտության: Չեռքերով ավելաց-
 նել դիրիժորական չափը՝ միաժամանակ երգելով կամ հաշվելով:
4. Անհատական երաժշտական էտյուդներ:
5. Իմիտացիա (մմանակում):
 Իմիտացիա՝ երաժշտական գործիքի, գործիքների և ձայնի:

Ուսումնամեթոդական գրականություն Հիմնական գրականություն

«Երաժշտառիթմիկ դաստիարակություն» քատերական ինստիտուտի դերասանական և ռեժիսուրայի բաժինների համար՝ ծրագիր, Մոսկվա 1969թ.:

Լրացուցիչ գրականություն

1. Գրիներ Վ.Ա., «Ռիթմը դերասանի արվեստում», Մոսկվա 1966թ.:
2. Դուրինյան Ա.Ա., Անձնական արխիվից:

Алавердян Тигран Гарикович

пианист, преподаватель кафедры камерного ансамбля ЕГК им. Комитаса

ПУТЬ ВЕЛИКОГО ПИАНИСТА

Эмиль Гилельс относится к величайшим пианистам XX столетия. Ученик Я.Ткача, а затем Б.Рейнгольда в Одесской консерватории, в 1935 году Гилельс совершенствовался в Московской консерватории у профессора Г. Нейгауза, который с 1934 по 1937 год был её директором. В 1933 году в возрасте 16-ти лет Гилельс был удостоен первого приза на Первом Всесоюзном конкурсе музыкантов-исполнителей в Москве. Он исполнил d-moll'ную фугу Баха — Годовского (из скрипичной сонаты), Фантазию Листа на темы "Свадьбы Фигаро" Моцарта, "Токкату" Равеля, Вариации Брамса на тему Генделя. В 1936 и 1938 годах Гилельс стал победителем Международных конкурсов пианистов в Вене и Брюсселе. Как писал Лев Оборин, "большой заслугой молодого музыканта Гилельса, свидетельством громадной его одарённости и упорной работы над собой явилась программа его выступлений, с которой он добился такой блестящей победы"(1.). Слушая записи Гилельса понимаешь, что он, глубоко восприняв русские традиции, представляет наиновейшую пианистическую культуру, вобравшую в себя традиции старых фортепианно-педагогических школ Европы. Невозможно полностью охарактеризовать и проанализировать творческий путь пианиста. Его репертуар огромен. 30-е годы — золотой период его исполнительского искусства. После Л.Оборина он показал, что русская (советская) исполнительская школа является передовой и лучшей в мире.

В 40-е годы XX века (годы войны) он был рядом с теми, кто воевал. Из рецензий и мемуаров, несмотря на малочисленность грамзаписей молодого пианиста, можно сделать вывод, что он был исполнителем высокого класса. Мы имеем магнитофонные записи выступлений, которые полностью позволяют осознать цельность его мастерства. В середине 40-х годов Гилельс зарекомендовал себя как исполнитель выдающихся композиторов — Сергея Про-

кофьева, Дмитрия Шостаковича, Арама Хачатуряна.

Сложное произведение С.Прокофьева — Седьмую сонату, он исполнил в 1943 году и дал свою оригинальную трактовку. Известный Фортепианный концерт А.Хачатуряна Гилельс играл ещё до войны. Первого успеха в трактовке произведений Д.Шостаковича он достиг в начале 50-х, исполнив три прелюдии (C — dur, D — dur и d-moll). Гилельс в 1951 году играл в Италии, Франции, Англии, в 1953г. — в Дании, Швеции, Бельгии, в 1955г. — в США и всегда публика восхищалась его талантом. Осенью 1954 года он открывает сезон Московской филармонии произведениями Дебюсси ("Сады под дождём", "Пагоды", "Движение", "В честь Рамо"), Прокофьева (Соната N2, "Мимолётности" и "Токката"). Как пишет В.Ю.Дельсон, "труд Гилельса — это труд сосредоточенного, вдумчивого музыканта, чуждого артистической богеме. Им определяется постоянное самообладание, артистическая ровность пианиста, с ним связаны и разнообразие, многожанровость его репертуара, огромный размах его концертной деятельности" (2.С. 26). В 50-е годы им были исполнены пять концертов Бетховена для фортепиано с оркестром (под управлением К.Зандерлинга с Ленинградским филармоническим оркестром в феврале и марте 1956 года, 2.С.9), а в 1968 году повторил бетховенский цикл (с Кливлендским оркестром под управлением Дж.Сэлла). В начале 60-х Эмиль Григорьевич выступает с фортепианными сонатами Шумана, Шопена, Листа, Вебера, Клементи.

Во второй половине 60-х он чаще выступает за рубежом. Весной 1967 года артист выступил в Ленинграде с Двадцать восьмой сонатой Бетховена, Восьмой сонатой Прокофьева, "Ночными пьесами" Шумана. Всё игралось на высоком исполнительском уровне (имеются записи, 3.С. 53).

Из молодого поколения композиторов внимание Гилельса привлекли А.Бабаджанян ("Героическая баллада"), А.Бабаев (Трио), М.Вайнберг (Сонаты N 2, N 4 и квинтет). Как писала С.Хентова, "А.Бабаджанян, талантливый пианист и ученик Игумнова, выдвинулся как автор "Героической баллады" для фортепиано с оркестром. Сочинение яркое красочное, напоенное ароматом Востока, представляло пианисту богатейшие возможности. Гилельс, не ограничиваясь исполнением в Советском Союзе, включил это произведение в програм-

мы зарубежных концертов в Бельгии, Франции. Исполнение баллады имело большой успех" (4.С. 114).

Нет ни одного специалиста, у которого искусство Гилельса не вызывало бы восхищения. Он выступил в Большом зале консерватории в Москве в декабре 1968г. В программе: Л.Бетховен, Соната N 8 для фортепиано (c-moll, соч.13 "Патетическая"), Соната N 14 для фортепиано (cis - moll, соч. 27 N 2 "Лунная"). В 70-е годы в Ленинграде в Малом зале филармонии пианист играл четыре сольных концерта. Звучала музыка Моцарта, Бетховена, Брамса, Грига, Рахманинова, Прокофьева. Слушая записи, чувствуешь глубокое проникновение пианиста в сущность творчества этих композиторов.

19 ноября 1979г. Э.Гилельс выступил с исполнением Первого концерта для фортепиано с оркестром П.Чайковского (b - moll, соч. 23) с Нью-Йоркским филармоническим оркестром (дирижировал Зубин Мета)*. Как известно, третья часть — финал *Allegro con fuoco*, b-moll - B-dur — один из ярких финалов Чайковского. Строем этой незамкнутой темы (украинской хороводной песни "Выйди, выйди, Иваньку заспівай нам веснянку" (5.С.244) требует повторения одного и того же мотива. Следует отметить, что гилельсовская трактовка необычно красива. Даже во время мощного *forte* в финале концерта в октавах звук его не резкий и не гремещий, в этом мастерство Гилельса. 31 мая 1984 года Гилельс дал концерт в Большом зале Ленинградской филармонии. В программе были семь сонат Скарлатти, "Pour le piano" Дебюсси, Двадцать девятая соната Бетховена. Несколькими днями позже, 3 июня артист выступил в Большом зале с Концертом Моцарта B-dur, K595 (заслуженным коллективом республики, академическим оркестром филармонии дирижировал К.Зандерлинг). 24 января 1984 года Эмиль Гилельс выступил в Большом зале Московской консерватории (повторно 26 января). Каждый раз он как бы заново очаровывал публику мощью своего музыкального гения.

Этот концерт был одним из самых вдохновенных для музыканта, чей исполнительский уровень был всегда необычайно высок.

* Имеется запись с концерта в Эвери Фишер холл, Линкольн-центр, Нью-Йорк.

В программе концерта значилось три имени — Скрябин, Прокофьев и Бетховен. В программе вечера были три разных по стилю произведения: Соната N 3 fis - moll, соч. 23, и пять прелюдий Скрябина соч. 74, вслед за Скрябиным - Прокофьев Соната N 3 a-moll, соч. 28. Второе отделение концерта было посвящено гигантскому творению Бетховена — Двадцать девятой сонате, соч. 106. Она столь трудна, что считалась неисполнимой. Гилельсовская интерпретация этой сонаты была воспринята как артистическое чудо, как событие исключительное в художественной жизни.

Народный артист СССР, Лауреат Ленинской премии Э.Г.Гилельс помимо сольных программ, играл с крупнейшими мировыми оркестрами, выступал в ансамблях, вёл обширную педагогическую и общественную работу, являлся профессором Московской консерватории, членом жюри многих международных конкурсов. Последний раз великий артист выступил 12 сентября 1985 года в Хельсинки с Двадцать девятой сонатой Бетховена. Так закончил великий пианист свой артистический путь.

Ввиду возросших требований, предъявляемых к исполнителям музыки, актуальной является задача эстетического воспитания студентов. В то же время, для воспитания эстетического вкуса большое значение имеет исполнительский показ. Изучая творческий путь исполнителя (пианиста), прослушивая музыкальные записи, студент сравнивает особенности почерка данного исполнителя (звукоизвлечение, ритмику и динамику исполнения) с почерком других исполнителей не для подражания, а для выбора своего пути и оценки своего исполнения. В свете этого, изучая путь выдающихся исполнителей (пианистов), у студента развивается творческое воображение, что необходимо в музыкально-исполнительской педагогике.

Примечания:

1. Оборин Л., "Гордимся своими товарищами", // Вечерняя Москва, 01.06.1938.
2. Дельсон В., Эмиль Гилельс., М., 1959.
3. Гаккель Л., Размышления о Гилельсе., // Советская музыка, 1986, # 12.
4. Хентова С., Эмиль Гилельс., М.: Музыка, 1967.
5. Альшванг А., П.И.Чайковский., М.: Музыка, 3-е изд., 1970.

Амбарцумян Нунэ Цоваковна

пианистка, преподаватель кафедры концертмейстерского мастерства ЕГК им.Комитаса.

СТАНОВЛЕНИЕ ФОРТЕПИАННОГО ИСПОЛНИТЕЛЬСКОГО ИСКУССТВА И ПЕДАГОГИКИ В АРМЕНИИ (1920-30 ГГ.).

Начнем с вопроса о том, когда и кто в начале 20-х годов XX века впервые в Армении начал преподавать игру на фортепиано. Первым примером организованного и обучения игре на фортепиано явились открытые 10 мая 1921 года в городе Дилижане так называемые фортепианные классы под руководством преподавательницы Алисы Саркисян *. Примечательно, что упомянутый факт является одним из первых в истории преподавания фортепиано в республике.

Через полгода, 22 декабря 1921 года в помещении новооткрытой Ереванской музыкальной студии на первом публичном концерте ее преподавателей педагоги И.А.Малатян и А.М.Мнацаканян исполнили фортепианные произведения Генделя, Скарлатти, Гайдна**.

Вот те, на первый взгляд скромные, но чрезвычайно важные сведения, касающиеся первых шагов профессионального исполнительства и педагогики в Советской Армении.

